

Ալբերտ Ա. Ստեփանյան  
պատմ. գիտ. դոկտոր

## ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄԻ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ ՄԵՃ ՀԱՅՔՈՒՄ

Մաս չորրորդ: Մեծ Հայքը և իրադրությունը Եփրատի  
քաղաքակրթական սահմանին՝ Ք. ա. I – Ք. հ. I դարերի շրջադարձին\*

### Մուտք

Գիտարկվող դարաշրջանում Արևելքի և Արևմուտքի միջև հաստատված մոտավոր ուժային համաչափելիությունը խախտվեց և տիրական դարձավ աշխարհաքաղաքական խզումը: Պատճառները տարաբնույթ էին և դժվար բացատրելի՝ ուղղազիծ հոլովույթի դիտանկյունից: Թերևս ավելի պատշաճ է խոսել իրադարձությունների համակարական (սիմպաթետիկ) համընկնումի մասին:

Խզումի հիմնական բևեռները՝ Հռոմը և Պարթևստանը, հայտնվել էին քաղաքակրթական ինքնանորոգման մարտահրավերի առաջ: Եվ պատմության տրամաբանությամբ նրանցից յուրաքանչյուրից պահանջվում էր մշակել ու իրագործել համարժեք քաղաքակրթական պատասխաններ: Համարժեք՝ նախ և առաջ իրենց նյութական և մտահոգևոր հնարավորությունների չափույթով: Դրանից էր կախված ինչպես այդ գերտերությունների, այնպես էլ նրանց հարակա երկրների պատմական ներունակության գործակիցը:

Ինչպես փաստում է պատմությունը՝ առաջինն այդ հիմնախնդրին մոտեցավ Հռոմն ու կարողացավ հաղթահարել գործընթացի բարդությունները՝ հարդյունս Օգոստոսի հասարակաշինական համալիր ջանքերի (Ք.ա. 27- Ք.հ. 14 թթ.): Դրանք արդյունավորվեցին քաղաքակրթական մի նոր հիմնակառույցի ձևավորմամբ, որը Հռոմին ապահովեց ևս երեքհարյուրամյա պատմական հեռանկար<sup>1</sup>:

Մինչդեռ Պարթևստանին սահմանված էր դեռ երկար խարխափել անկայունության ոլորաններում: Ավելի քան յոթանասուն տարի անց, Վաղարշ I Արշակունու գահակալմամբ (51-79 թթ.) իրական քայլեր ձեռնարկվեցին՝ բարեփոխելու պարթևական քաղաքակրթության հիմնարար չափույթները և միջազգային հարաբերություններում ներկայանալու իբրև ներգործուն մեծություն<sup>2</sup>: Իսկ մինչ

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.02.2011: Սկիզբը տես Վեմ, 2009, N3, 2010, N1,3:

1 Տե՛ս **W.Eder**, Augustus and the Power of Tradition. The Augustan Principate as Biding Link between Republik and Empire, in – Between Republik and Empire. Interpretations of Augustus and his Principate (ed. by K.Raaflaub and M. Toher), Berkley, 1990, pp. 81-86.

2 Տե՛ս **A.D.H. Bivar**, The Political History of Iran under the Arsacids, in- The Cambridge History of Iran (ed. by E. Yarshater), v.3/1, London/New York, 2000, pp. 78-81.

այդ Մերձավոր Արևելքում տիրական էր աշխարհաքաղաքական անհամաչափությունը: Ընդամին, Հռոմն ուներ անժխտելի գերակայություն: Ի տարբերություն իր նրցակցի, նա ծավալվում էր ժամանակի, տարածության և ընկերային արժեքանության երկար տևողությունների ծիրում: Ուստի Հռոմի ծրագրերն ու գործողությունները նպատակամետ էին ու արդյունական<sup>3</sup>:

Հայսմ պետք է բացատրել այն լարումը, որն առկա էր Եփրատի և Փոքր Ասիայի սահմաններին՝ Ք.ա.30 թվականից ի վեր: Դրանք իրենց խոր կնիքը թողեցին նաև դարաշրջանի Հայոց պատմության վրա: Հարկ ենք համարում հատկանշել, որ այս պարագային նույնպես ասվածն ամենևին չի նշանակում, թե Մեծ Հայքը ծավալվող պատմական իրադարձությունների սուկ կրավորական մասնակիցն էր: Պատմական փաստերը, ինչպես ցույց կտրվի ստորև, վկայում են Հայոց կողմի աշխարհաքաղաքական ներուժի և գործողութենական կամքի մասին:

## 1. Հռոմեական խաղաղությունը (Pax romana)

Ք.ա. I դարի վերջին քառորդը նշանավորվեց հռոմեական պատմության մի նոր կերպավորությամբ: Ավանդական Հանրապետությունը, որը ճգնաժամի մեջ էր հայտնվել վերջին հարյուրամյակի ընթացքին, սկսեց իր տեղը զիջել համակեցական մի նոր համալիրի՝ պրինցիպատին (հանրապետական միապետություն): Ինչպես նշեցինք, դրա նախածեռնողն ու իրագործողը Գայուս Հուլիուս Կեսար Օկտավիանոսն էր: Պրինցիպատը կոչված էր համարժեք քաղաքակրթական պատասխաններ մշակելու Հռոմի դեմ ծառայած քաղաքակրթական նորանոր մարտահրավերներին:

Խոսելով ավանդական հանրապետության մասին՝ ժամանակակիցները համոզված էին, որ այն փշուր-փշուր է եղել (Res publica delecta) [Salust., Cat., XI, 3]<sup>4</sup>: Հայդն նկատի ունեին ներքին ու արտաքին խոր հակասությունները՝ ընկերային, քաղաքական, գաղափարախոսական, մշակութային, տնտեսական, անձնային-հոգեբանական: Դրանք խաթարել էին հռոմեացիների թերևս առավել գնահատելի ընկերային արժեքը՝ միաբանությունը (concordia)<sup>5</sup>: Տիրական էր դարձել դրա քառտիկ հակարժեքը՝ գժտությունը (discordia), որը տեղիք էր տվել ընկերային հիմնարար հարաբերությունների խաթարմանը՝ որդիներ-հայրեր, ծառաներ-տերեր, բանակ-հայրենիք, խոշոր անհատականություն-քաղաքացիական համայնք, պրովինցիա-Հռոմ և այլն<sup>6</sup>:

Ամենուրեք իրավաբարոյական և օրինական հարաբերություններին (mos maiorum, lex) փոխարինելու էին եկել բռնի ուժն ու հրամայականը: Դրանք սովորաբար ուղեկցվում էին ապօրինությամբ, կողոպուտով ու սպանություններով:

3 Տե՛ս **F. Millar**, *The Roman Empire and its Neighbours* (2d ed.), London, 1977, p. 32.

4 Տե՛ս **D. C. Earl**, *Political Thought of Sallust*, Amsterdam, 1966, p. 16; **Ա. Սարգսյան**, Սալլուստիոս. Հռոմեական հանրապետության ճգնաժամը և հասարակական «բժշկման» խնդիրը, ԲԵՅ, 113(2004), էջ 131-132:

5 Կիկերոնը դրա հիմնապատճառը տեսնում էր հռոմեական համակեցության իրավաբարաբերությունների խախտման մեջ: Չամաձայն նրա դա առաջին հերթին հանգեցրել է արդարության (iudicia) վերասերմանը [Cic., Ad Att., IV, 3; cf. Vell. Pat., II, 26, 2; App., Bell. Civ., I, 4, 33]: Տե՛ս **Է. Մ. Штраерман**, Римское право, в кн. - Культура древнего Рима, т. 1, Москва, 1985, с. 224-225.

6 Տե՛ս **F. Millar**, *Triumvirate and Principate*, *Journal of Roman Studies*, 63 (19673), pp. 52-54; **P. A. Brunt**, *Nobilitas and Novitas*, *Journal of Roman Studies*, 72 (1982), pp. 2-3.

Անհատների և հանրախմբերի եսակենտրոնությունը համակեցական կյանքը կանգնեցրել էր փակուղու առաջ: Դա էլ տեղիք տվեց տևական և կործանիչ քաղաքացիական կռիվների, որոնց վերջին արարը Գ.Օկտավիանուսի և Մ.Անտոնիուսի ռազմական բախումն էր: Այն ավարտվեց Ակտիումի ծովամարտով (Ք.ա.31 թ.) ու Անտոնիուսի պարտությամբ: Եվ Օկտավիանուսը դարձավ հռոմեական տերության իշխանական կառույցի գերագույն ներկայացուցիչը:

Գալով իշխանության՝ նա խնդիր դրեց վերականգնել (հարկավ, միանգամայն նոր հիմունքներով) համակեցական կարգն ու անդորրը: Տակիտուսի ձևակերպմամբ. «Նա առիճքնեց զինվորներին՝ նվերներով (*donis*), հասարակ ժողովրդին՝ ուտեստով (*annona*), իսկ մնացած բոլորին՝ ըղձալի խաղաղությամբ ու անդորրով (*dulcedine otii*)» [Tacit., I, 2, 1]: Մակայն վերականգնման ծրագիրն ավելի խորքային էր՝ կառուցված ըստ ժամանակի քաղաքական իմաստասիրության հիմնարար հղացքների: Խոսքն, ի մասնավորի, ստոիցիզմի մասին է, որի ականավոր ներկայացուցիչներից Աթենոդորոս Տարսունացին և Արիոս Դիոնիսոսը Օկտավիանուսի մտերիմ խորհրդականներն ու գործակիցներն էին<sup>7</sup>:

Համաձայն պաշտոնական քարոզչության՝ Հռոմում վերահաստատվում էր հանրապետական կարգը, միայն մի «թեթևակի վերապահությամբ»՝ ականավոր մեկի գերակայությամբ<sup>8</sup>: Դա էլ առաջ բերեց իշխանական կառույցի և գործառույթի երկվություն: Մի կողմից, շարունակում էին գործառել Ծերակույտը, Աշխարհաժողովը և տարաստիճան պաշտոններունը: Եվ Օկտավիանուսն էլ ժամանակ առ ժամանակ զբաղեցնում էր հանրապետական բարձր պաշտոններ՝ ցենզորի, կոնսուլի, ժողովրդական տրիբունի: Ի վերջո՝ նաև գերագույն քրմի (*Pontifex maximus*)<sup>9</sup>: Մյուս կողմից, միապետի շուրջ սկսեց ձևավորվել սեփական Խորհուրդը (*Consilium principis*)՝ բաղկացած նրա մտերիմ-աջակիցներից (*amici Caesaris*): Ընդամին, առաջին հերթին գնահատվում էին վերջիններիս մարդկային և գործարար հատկանիշերը, ուստի ընդգրկվել էին անգամ հասարակ ծագումի անձինք: Ասվածին հավելենք, որ Խորհուրդը թեպետ պաշտոնական չէր, բայց վճռական ազդեցություն ուներ պետական քաղաքականության գրեթե բոլոր տիրույթների նկատմամբ<sup>10</sup>:

Օկտավիանուսի նախաձեռնությամբ և ուղղորդմամբ նրա գաղափարակից Կլ.Մեկենասը ձևավորել էր նաև, այսպես կոչված՝ «Գաղափարական կենտրոնը», որին մասնակցում էին ժամանակի նշանավոր մտավորականները՝ հանրագիտականներ, իմաստասերներ, բանաստեղծներ, ճարտասաններ, պատմագիրներ՝ Մ.Տերենտիուս Վարրոն, Աթենոդորոս Տարսունացի, Վերգիլիուս, Հորացիուս, Տի-

7 Տե՛ս **Ch.Gill**, *The School in the Roman Imperial Period*, in – *The Stoics* (ed. by B.Inwood), Cambridge, 2003, (421 p), pp.34-37; **P.A. Brunt**, *Stoicism and the Principate*, Papers of the British School at Rome, 43 (1975), p.7-8.

8 Ժամանակակիցներին ներշնչվում էր այն գաղափարը, թե դա արձատապես նոր համակեցական կարգ է (*novus status*) [Suet., *Div. Aug.*, 28, 2] : Տե՛ս **R.Syme**, *The Roman Revolution*, Oxford, 2002, pp.321-324; **P.Southern**, *Augustus*, London/New York, 1998, p.76; **R.Palmer**, *Octavian's First Attempt to Restore the Constitution*, *Athenaeum*, 56 (1978), pp.316-317.

9 Տե՛ս **J.A. Crook**, *Augustus: Power, Authority, Achievements*, *The Cambridge Ancient History (CAH)*, v.10 *The Augustan Empire 43 B.C. –A.D.69* (ed. by A.Bowman, Ed.Champlin, A.Lintott), Cambridge, 2006, pp.117-123.

10 Կայսերական խորհուրդն իր աստիճանական զորացմամբ արձատական դեր է խաղացել արինցիպատի քաղաքական համակարգի զարգացման մեջ: Տե՛ս **J.Crook**, *Consilium Principis. Imperial Council and Councillors from Augustus to Diocletian*, Cambridge, 1955, pp.36-38; **G. Mousourakis**, *The Historical and Institutional Context of Roman Law*, Burlington, 2003, pp.247-249.

տուս Լիվիոս և այլք: Նպատակն էր ստեղծել մտահոգևոր պատկերացումների և հղացքների մի ամբողջական համակարգ՝ արդարացնելու համար նոր ձևավորվող կարգն իբրև Նախախնամությամբ կանխագծված բարեշրջում: Ժամանակակիցներից շատերը հավատում կամ ցանկանում էին հավատալ այդ քարոզչությանը: Օկտավիանուսը նրանց ներկայանում էր մերթ իբրև լավագույն քաղաքացի (optimus civis), մերթ՝ Հանրապետության ճշմարիտ ուղղորդող (rector), մերթ չափաբերող (moderator), մերթ խնամակալ (procurator), մերթ ուսուցիչ (magister): Հետագայում նաև՝ հայրենիքի հայր (pater patriae)<sup>11</sup>: Միմյանց համաբերված այդ «հանրապետական դիմակները» նրա իշխանությանը (որքան էլ տարօրինակ է) հաղորդում էին միապետական իմաստ ու բովանդակություն<sup>12</sup>:

Իսկ համաբերման մեկնակետն օրենքն էր (lex): Համոզում կար, որ վերջինս ի գործու է հավասարակշռել համակենցական կյանքի բոլոր ծայրահեղությունները: Ի մասնավորի՝ անպարագիծ ազատությունը (սանձարձակություն) և նույնքան էլ անպարագիծ ստրկությունը (բռնություն): Ընդամեն, օրենքն ընկալվում էր իբրև դրանց համաչափ ու ստեղծագործ միջինը (δ νόμος γάρ τὸ μέσον) [Aristot., Polit., IV, 1287b; cf. Cicero, De rep., VI, 27, 1]<sup>13</sup>:

Օրենքի գործառնությամբ Օկտավիանուսը ձգտում էր հավասարակշռել նաև իր անձնական իշխանությունը՝ համաբերելով դրա երեք կառուցիկ տարակերպերը՝ վարչառազմական (imperium), վարչաքաղաքացիական (tribunicia potestas) և կրոնաքարիզմատիկ (auctoritas)<sup>14</sup>: Հավելենք, որ հենց վերջինիս կապակցությամբ նա ընդունեց augustus – «պայծառակերպ» պատվանունը, որով էլ հայտնի է պատմությանը՝ Օգոստոս: Դա նրան հնարավորություն էր տալիս առաջին հերթին «ստվերելու» իր բացարձակ իշխանությունն ու կարգավիճակը. «Ես լոկ հեղինակությամբ էի գերազանցում բոլորին (auctoritate), սակայն իշխանության առումով (potestatis) չունեի ոչինչ ավելի» [Aug., RG, VI, 34]<sup>15</sup>:

Հարկավ, ասվածը չափազանցություն է: Այդուհանդերձ, Օգոստոսի ինքնասահմանափակման միտումը լուրջ կասկածներ չի հարուցում: Դա էլ ստեղծեց արդարադատության (iustitia) և հասարակական կայունության (stabilitas) այն երաշխիքները, որոնց տիրություն միապետն սկսեց կառուցակազմել Հռոմի ներհանրությանի տարածքը: Սահմանվեցին ընկերային դասերի իրավունքներն ու պարտականությունները՝ ծերակուտականներ, հեծյալներ, հասարակ ժողովուրդ և (անգամ) ստրուկներ: Այդ նպատակով միապետը մի քանի անգամ անցկացրել է քաղաքացիների ցենզ-հաշվառում (lustrum) [Aug., RG, II, 8]<sup>16</sup>:

11 Տե՛ս E.T. Salmon, The Evolution of the Augustus Principate, Historia, 5(1956), pp.461-465; G. Mourakakis, op.cit., pp. 247-249.

12 W.Eck, The Age of Augustus (2d ed.), Malden/Oxford, 2007, pp. 52-55.

13 Արիստոտելն անմիջական աղերս էր տեսնում օրենքի (νόμος) և արդարության (δική) միջև: Ստոիկ իմաստասերներն այդ աղերսին հաղորդեցին համընդհանուր բովանդակություն: Մեկնարկելով այդ գաղափարից՝ Օգոստոսի դարաշրջանի գաղափարախոսությունը համակարակա կապ էր տեսնում հռոմեական և տիեզերական կարգերի միջև: H. D. Jocely, The Ruling Class of the Roman Republic and Greek Philosophers, Bulletin of the John Ryland Librery, 59(1977), pp339-342; M.Schofield, Social and Political Thought, in – The Cambridge History of Hellenistic Philosophy (ed.by K.Algra, J.Barnes, J.Mansfeld), Cambridge, 2002, pp.756-757.

14 Տե՛ս A.H.Jones, The Imperium of Augustus, Journal of Roman Studies, 41(1951), pp.113-115.

15 Հետազոտողները մեկնարկում են այն փաստից, որ auctoritas և augustus հղացքներն անմիջական աղերս ունեն augeo բայի հետ՝ «աճել», «բարձրանալ», «վեհանալ» «պայծառանալ» նշանակությամբ: Տե՛ս W.Eck, op.cit.,pp.56-57; M.Grant, From Imperium to Auctoritas, Cambridge, 1946, pp.78-91.

16 Տե՛ս K.R.Bradley, Slaves and Masters in the Roman Empire, Oxford, 1987, pp. 84-95.

Մեփական միջոցներից մեծաքանակ նվիրատվություններ (beneficium) կատարեց նրանց՝ ունեցվածքային և հասարակական կարգավիճակը վերականգնելու կամ պահպանելու նպատակով: Ճշգրիտ կարգաբերման խնդիր դարձան ընտանեկան հարաբերությունները՝ ամուսնություն, ունեցվածք, ժառանգություն, որդեգրում<sup>17</sup>: Ասվածը վերաբերում է նաև հասարակական բարոյականությանը [Aug., RG, I,6]: Այս կապակցությամբ Օգոստոսն ընդունել էր օրենքների և բարքերի խնամակատարի գերագույն լիազորություններ (curator legum et morum)<sup>18</sup>:

Բարեփոխումների մի ամբողջ փաթեթ վերաբերում էր պետական գանձարանին, պրովինցիաների կառավարման համակարգին և բանակին: Պետական դրամական մուտքերն ու ծախքերը տնօրինում էին երկու գանձարան: Մեկը (erarium) ենթարկվում էր Ծերակույտին, մյուսը (fiscus)<sup>19</sup>՝ միապետին<sup>19</sup>: Իրականում բաժանումը լույս ձևական էր. երկուսն էլ (ուղղակի կամ միջնորդված) Օգոստոսի վերահսկողության ներքո էին: Վերահսկողություն, որը նրան լծակներ էր տալիս կարգաբերելու պետական դրամահատությունը, արդյունագործությունը, հարկերը, շուկաները:

Նույնը վերաբերում էր պրովինցիաներին: Դրանք նույնպես բաժանվել էին երկու կարգի՝ կայսերական և ծերակուտական: Երկուսի կառավարիչներն էլ վերջին հաշվով հաշվետու էին միապետին: Դրա հետ մեկտեղ կարևորվեց նաև պրովինցիաների կառավարման մի նոր համակարգ՝ կառուցված ըստ «հակադարձ կապի» սկզբունքի<sup>20</sup>: Բովանդակությունը հետևյալն էր. նշանավոր քաղաքային համայնքները միավորվում էին, կազմում միություններ (πολιτεῖαι, κοινονῖαι) և անմիջական կապեր հաստատում Օգոստոսի վարչակազմի հետ՝ շրջանցելով տեղական պաշտոնական կառույցները<sup>21</sup>: Նպատակն էր «Հռոմ-ձայրամաս» հարաբերություններին հաղորդել թափանցիկություն և ճկունություն:

Ինչ վերաբերում էր բանակին, ապա դրա կառավարումը համարվում էր Օգոստոսի մենաշնորհը (imperium proconsulare)<sup>22</sup>: Եվ աստ նկատելի էր երկակի մոտեցում. մի կողմից, ամեն ինչ արվում էր լեգիոնների արհեստավարժ մակարդակը և մարտունակությունը բարձրացնելու, մյուս կողմից՝ դրանց թիվը սահմանափակելու ուղղությամբ: Հիրավի, Օգոստոսի նախաձեռնությամբ հանրապետական դարաշրջանի 75 լեգիոնից մնաց ընդամենը 28-ը<sup>23</sup>: Պաշտոնական քարոզչությունը դա ներկայացնում էր իբրև համակեցական միջավայրի ապառազմականացման քայլ: Եվ դա հեռու չէր իրականությունից. «Ամենուրեք կասեցվեց զենքի կիրքը (armorum furor), վերահաստատվեց խաղաղությունը: Օրենքներին՝ զորություն, դատարաններին՝ հեղինակություն, Ծերակույտին՝ վե-

17 Տե՛ս **P.A.Brunt**, Italian Manpower, 225 B.C.-A.D.14, Oxford, 2001, pp. 154-156.

18 Տե՛ս **A.Momigliano**, Augustus, The Oxford Classical Dictionary, pp.150-151; **R.A.Kaster**, Emotion, Restraint and Community in Ancient Rome, Oxford, 2005, p. 134.

19 Տե՛ս **G. Mousourakis**, op.cit., 249-251; **F.Millar**, Fiscus in the First Two Centuries, Journal of Roman Studies, 53(1963), pp.34-35; **R.Duncan-Jones**, Money and Government in the Roman Empire, Cambridge, 1994, pp. 18-24.

20 Տե՛ս **F.Millar**, The Emperor, the Senate and Roman Province, Journal of Roman Studies, 56(1966), pp. 153-156; **A.H.Jones**, Augustus, London, New York, 1975, pp. 94-109.

21 Արևելքում և, մասնավորաբար, Փոքր Ասիայում կառավարման տվյալ համակարգը մեծապես զարգացրել էր Գն. Պոնափուսը: Տե՛ս **C.Eilers**, Roman Patronage of Greek Cities, Oxford, 2002, pp.135-136.

22 Տե՛ս **M.Goodman**, The Roman World, 44 B.C.-A.D.180, London 1977, pp. 40-41.

23 Տե՛ս **G.R.Watson**, Legion, The Oxford Classical Dictionary, pp.592-593; **G.Webster**, The Roman Imperial Army of the First and Second Centuries, Oklahoma, 1998, pp. 24-26.

հույություն, պաշտոնյաներին՝ [իրական] իշխանություն վերադարձվեց» [Vell. Pat., II, 89, 34]:

Կրկնենք մեկ անգամ էլ. պետական բոլոր ձեռնարկումներում շեշտադրվում էին վարչական, տնտեսական, կրոնաքարհիզմատիկ, մշակութային խթանները: Իսկ ընկերային գիտակցության մեջ արմատավորվում էր այն գաղափարը, թե Հռոմը համընդհանուր բարիք է (utilitas univarsa) իր ծիրում հայտնված բոլոր անհատների, համակեցական միավորների և ազգերի համար<sup>24</sup>: Բարիք, որն ամանցվում էր Օգոստոսի անձնավորության հիմնարար չափումներից՝ արիություն (virtus), իմաստություն (clementia), արդարադատություն (iustitia), ողորմածություն (pietas): Այս հղացքը համարվում էր միանգամայն իրավական: Ուստի միապետի ոսկե վահանին դրվագված հիշյալ առաքինությունները կախված էին Ծերակույտի դահլիճում (curia) [Aug., RG, VI, 34]<sup>25</sup>:

Պետական քարոզչությունը համոզմունք էր սերմանում, թե տարածվելով հասարակական ամբողջի վրա՝ վերջիններս ի գորու են կյանքի կոչել **Հռոմեական խաղաղությունը (Pax romana)**: Մի հղացք, որով ժամանակակիցներն արտահայտում էին նախ և առաջ՝ ընկերային կյանքի տարասեռությունները համաչափելու հռոմեական տեսլականը<sup>26</sup>: Հավելենք նաև հետևյալը. արդի քաղաքագիտության եզրաբանությամբ՝ հռոմեական պատմության այս նոր շրջափուլը կարելի է բանաձևել իբրև համակեցություն՝ կայուն ընկերային և մտահոգևոր երաշխիքներով<sup>27</sup>:

Հռոմեական խաղաղությունն ուներ նաև իր հստակ արտաքին-քաղաքական հեռանկարը: Ուստի հաջորդ քայլերով Օգոստոսը որոշեց այն տարածել ամբողջ Տերությունով մեկ՝ կենտրոնից մինչև հեռավոր ծայրամասեր՝ պրովինցիաներ, կախյալ թագավորություններ, քաղաքային համայնքներ, ցեղապետություններ, կրոնապետություններ՝ Բրիտանիայից մինչև Եթովպիա, Հերակլյան սյուներից մինչև Եփրատ<sup>28</sup>: Հավելենք, որ այդ նույն նպատակով օգտագործվում էին իշխանական հրամայականն ու տեղական ինքնավարությունը, լեզուն (լատիներեն, հունարեն) ու թատրոնը, տաճարներն ու դպրոցները, մարզախաղերն ու ծեսերը, ճանապարհներն ու ծովուղիները, ջրմուղներն ու հասարակական բաղնիքները: Դրանք ներկայացվում էին իբրև «ճշմարիտ հռոմեական կենսակերպի» չափորոշիչներ:

Այս մեկնակետից՝ պաշտոնական քարոզչությունը հռոմեական ծավալումը «երփներանգում էր» բացառապես խաղաղ պատկերներով: Եվ ի հաստատումն ասվածի՝ հաճախ մեջբերում էր Օգոստոսի ուղերձը ծերակուտականներին՝ արված նրա մենիշխանական կառավարման հենց առաջին օրը՝ Ք.ա. 27 թվականի հունվարի 10-ին. «Խստորեն պաշտպանեցեք ինչ ունեք և մի ցանկացեք այն, ինչ ձերը չէ» [Dio, Cass., LIII, 10, 4]: Հատկանշվում էր նաև նրա մեկ այլ պատվիրան՝ ռազմական ուժ կիրառել միայն ծայրահեղ անհրաժեշտության պարագային

24 Տե՛ս **J.A. Crook**, Augustus: Power, Authority, Achievements, CAH, v.10, pp.139-140.  
25 Վաղուց անտի դրանք նկատվում էին իբրև ճշմարիտ հռոմեացուն հարիր բարոյական արժեքներ: Տե՛ս **R.A.Kaster**, op. cit., pp 135-136.  
26 Տե՛ս **H.H. Scullard**, From Gracchi to Nero. A History of Rome.From 133 B.C. to A.D.68, London,1963, pp.197-199.  
27 Տե՛ս **J.Wolff**, An Introduction to Political Philosophy, Oxford, 1996, pp. 39-40.  
28 Տե՛ս **J.C.Mann**, The Frontiers of the Principate, ANRW, Bd.II, Hlb.I, Berlin, 1974, pp.513-524;  
**E.N. Luttwak**, The Grand Strategy of Roman Empire, in - Roman Imperialism, (ed.by C.B.Champion, M.Eckstein), Oxford, 2004, pp. 279-282.

[Tacit., Ann I, 11]<sup>29</sup>:

Խաղաղության ներհանրության և արտահանրության չափույթները կարգաբերելիս Օգոստոսը մեկնարկում էր (կրկնենք մեկ անգամ էլ) քաղաքակրթական համաբերման սկզբունքից: Դաժան քաղաքացիական պատերազմից հետո նա խուսափեց «հակառակորդի կերպարից»՝ ինչպես Հռոմում, այնպես էլ ողջ Տերությունում: Չհետապնդեց Անտոնիուսի հետևորդներին: Տեղերում էլ պաշտոնանկ չարեց նրա օրոք իշխանության հասած արքաներին, տիրաններին, պրովինցիաների կառավարիչներին ու ցեղապետներին: Գնահատում և կարևորում էր նախ և առաջ նրանց գործնական հատկանիշերը, հեղինակությունը և նվիրվածությունը Հռոմին<sup>30</sup>:

Օգոստոսի օրոք առավել հստակ գիտակցվում և շեշտադրվում էր, որ Տերությունը միջազգային հարաբերությունների միջավայր է: Միջավայր, որտեղ տարասեռությունները քաջալերվում էին և բանաձևվում կայուն (հաճախ նաև՝ շարժուն) իրավաբաժեքային սանդղակներով՝ ըստ ավանդույթի, օրենքի ու կոնկրետ իրադրության՝ սկսած հանձնվածներից (deditici), մունիցիպալներից (municipii) մինչև պրովինցիաներ, խնդրարկու ցեղապետություններից ու քազավորություններից (clientes) մինչև բարեկամներ (amici)<sup>31</sup>: Եվ այդ կապակցությամբ կրկին հատկանշվում էր Օգոստոսի միավորիչ կերպարը: Ողջ Տերությունով մեկ հպատակները նրան խնդրարկուի (կլիենտ) հավատարմության երդում էին տալիս: Նրա կամքը (numen) և հանձարը (genius) աստվածացվում էին: Նրան (և Հռոմին) նվիրված տաճարներն ու սրբազան ծեսերը նկատվում էին իբրև ասվածի կոնկրետ արտահայտություններ<sup>32</sup>:

Անշուշտ, պատկերն այս աստիճան իդեալական չէր, քանզի Օգոստոսի օրոք մույնպես Հռոմը վարում էր պատերազմներ՝ Եթովպիայի սահմաններին, Երջանիկ Արաբիայում, Սպանիայում, Գաղիայում, Դանուբի և Հռենոսի սահմանների երկայնքով: Եվ դրանք միշտ չէ, որ ավարտվում էին նրա համար բարենպաստ արդյունքով: Մակայն պաշտոնական քարոզչությունն աշխատում էր սավերել այդ ամենը: Համաձայն վերջինիս՝ Հռոմը պատերազմում էր միայն վայրի ցեղերի ու ժողովուրդների դեմ, որոնք հասու չէին համակեցական բարձր արժեքներին և չէին ցանկանում ճանաչել նրա քաղաքակրթիչ գերակայությունը (non parent imperio nostro) [Aug., RG, V, 26]<sup>33</sup>: Շեշտադրվում էր, որ մնացած բոլոր դեպքերում պատերազմի անհրաժեշտություն չկա, և խաղաղությունն էլ այլընտրանք չունի. «Բազում ժողովուրդներ, որոնք հռոմեական ազգի հետ չունեին դեսպանների [փոխանակություն] և բարեկամական հարաբերություններ, արդ ճաշակեցին մեր հավատարմությունը» [Aug., RG, VI, 32]:

Ասվածը ճշմարիտ էր թերևս մեկ առումով մույնպես. Օգոստոսի դարաշրջանից ի վեր Հռոմն իր արտաքին քաղաքականության մեջ սկսեց նախապատվություն

29 Իր «Կտակում» (հարկավ, չափազանցված երանգներով) Օգոստոսն այս մասին հատկանշում է. «Աշխարհով մեկ ներքին ու արտաքին պատերազմներ վարեցի: Եվ իբրև հաղթող մեծահոգի եղա բոլոր նրանց նկատմամբ, ովքեր ըղձում էին դրան: Իսկ արտաքին ժողովուրդներին, որոնց ներքեցի, նախընտրեցի պահել-պաշտպանել, քան թե կործանել» [Aug., RG., I, 3]: Տե՛ս **A.H.Jones**, Augustus, London, 1970, pp. 94-109.

30 Տե՛ս **G.W.Bowersock**, August and the Greek World, Oxford, 1996, pp. 51-61.

31 Տե՛ս **H.Braunert**, Omnium provinciarum populi Romani fines auxi, Chiron, 7(1977), pp.211-212.

32 Տե՛ս **M.Hamond**, Hellenistic Influence on the Structure of Augustan Principate, Momoiros of American Academy in Rome, 17 (1940), pp. 18-19. **M.Reinhold**, August's Conception of Himself, Thought, 55(1980), pp. 36-39.

33 Տե՛ս **G.Webster**, op.cit., pp.18-30; **J.C.Mann**, op.cit., pp. 518-522.



տալ «ճկուն քաղաքական խաղերին»: Վարչակազմն ուշի ուշով հետևում էր հարևանների ներքաղաքական զարգացումներին և աշխատում միջամտել դրանց՝ չխորշելով կաշառքից, սադրանքից, դավադրությունից ու սպանությունից: Իսկ եթե հարցը հասնում էր ռազմական բախումի, ապա փորձում էին դա լուծել նախ և առաջ դաշնակից ու բարեկամ երկրների զինուժի օգտագործմամբ<sup>34</sup>:

**Ամփոփենք.** Օգոստոսի օրոք կառուցակազմվեց հռոմեական համակեցական համալիրի նոր և բազմաչափ տարակերպը՝ պրինցիպատը: Միապետական կառույցի ծիրում (իշխանական ուղղահայաց) այն միավորում էր հանրապետական արժեքներն ու կառույցները (հրապարակ): Եվ միտում ուներ բարենորոգչական ճիգով քաղաքակրթական հոմեոստասիս հաստատել Տերության ներհանրությանին և արտահանրությանին միջավայրերում՝ ի մի բերելով բնակեցված աշխարհի (οἰκουμένη) մարդկային տարասեռ զանգվածը:

Սեփական դերի այս ընկալումը նորություն չէր հռոմեական գիտակցության մեջ: Տակավին Զ.ա. II դարի վերջերին նման մի տեսլական բանաձևել էր ստո-իկյան ականավոր իմաստասեր և պատմագիր Պոլիբիոսը: Նրա պատմագիտական հղացքում Հռոմը պատկերագրվում էր իբրև քաղաքակիրթ աշխարհի Հոգին (ψύχη τῆς οἰκουμένης), որը մնացյալ աշխարհին (կրավորական մարմին) հաղորդում էր եռանդ և կենսական հոլովույթ: Մեկնարկելով այդ ըմբռնումից՝ Օգոստոսի դարաշրջանի գաղափարախոսները ջանք չէին խնայում նույն դերակատարությունը վերագրելու արդեն նորընծա միապետին<sup>35</sup>:

Կարծում ենք, հենց այս ըմբռնումներից էլ պետք է արտածել հետևյալ փաստը. իր հանրահայտ «Կտակում» Օգոստոսը populus՝ «ազգ» եզրն օգտագործում է միայն հռոմեացիների առնչությամբ: Մնացած բոլոր հանրությունների վերաբերմամբ օգտագործում է gens (gentes) եզրը, որի առաջնային նշանակությունը «տոհմ» կամ «ցեղ» է: Լավագույն դեպքում՝ նաև «ժողովուրդ»: Բացառություն չեն անգամ պարթևները [Aug., RG, VI, 32-33]: Այս և նման եզրերի կիկերոնյան ըմբռնումներին արդեն անդրադարձել ենք, արդ շեշտադրենք միայն հետևյալը. օգոստոսյան դարաշրջանի հասարակական միտքը հակված չէր որևէ այլ համակեցություն ընդունել իբրև Հռոմին համաչափելի մեծություն<sup>36</sup>: Հուսկ՝ վերադարձ հռոմեացիների ավանդական ինքնութենական հղացքին, ըստ որի բնակեցված աշխարհը կարիք ունի իրենց առաջնորդության:

Նման ըմբռնումների մեկնակետից պաշտոնական քարոզչությունն սկսեց Օգոստոսի կառավարումը ներկայացնել իբրև նոր շրջափուլ (novum saeculum) ոչ միայն հռոմեական, այլ նաև համայն պատմության ծիրում [Verg., VI, 791-853]<sup>37</sup>: Ասվածի դիտանկյունից, կարծում ենք, պատշաճ է մեկ անգամ էլ անդրադառնալ Վելլետու Պատերկուլլուսի հանրայտ հղացքին. «Ասորեստանցիներն առաջիններն էին, որ տիրեցին բոլոր ազգերին, ապա՝ մարերը, ապա՝ պարսիկները, ապա՝

34 Տե՛ս **P.M.Edwell**, *Between Rome and Persia. The Middle Euphrates, Mesopotamia and Palmyria under Roman Control*, New York, 2008, pp. 7-31.  
35 Տե՛ս **T.P.Wiseman**, *History, Poetry and Annales*, in- *Clio and Poets. Augustan Poetry and the Traditions of Ancient Historiography* (ed. by D.S. Levene and D.P. Nelis), Leiden/Boston, 2002, pp. 353-362.  
36 Ասվածի դիտանկյունից հույժ հատկանշական է հետևյալ փաստը: Հանրագիտակ Տ. Վարրոնը Հռոմի վաղ պատմությանը նվիրված քննախոսության մեջ հռոմեացիներին բնութագրում է նույն եզրույթով *De gente populi Romani*: Համաձայն նրա՝ հռոմեացիներն այդ շրջանում տակավին առաջնորդվում էին նախնայաց բարբերով և ծանոթ չէին Օրենքին: Տե՛ս **T.P.Wiseman**, *op.cit.*, p. 334.  
37 Տե՛ս **C.J. Classen**, *Clio Exclusa*, - *Clio and Poets. Augustan Poetry and the Traditions of Ancient Historiography*, pp. 16-18.



մակեդոնացիները. [...] Ի վերջո, ողջ իշխանությունն անցավ հռոմեական ազգին» [Vell. Pat., I, 6, 6]: Համաձայն արդի քաղաքակրթական ըմբռումների՝ ասվածը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևմամբ. Օգոստոսի դարաշրջանում Հռոմը սկսեց նորից ապրել ժամանակի և ընկերային արժեքանության համալիր ալգորիթմով: Մինչդեռ նրա «քաղաքակրթական հարևանների» կյանքում գերակայում էին պատմության առտնին (առավելաբար քաղաքական) արժեքանությունն ու չափումը<sup>38</sup>:

## 2. Պարթևստանը պատմության ճամփաբաժանում

Դիտարկվող դարաշրջանում պարթևաց պատմության մեջ նույնպես արձանագրվեցին էական կերպափոխություններ: Դրանք ունեին ներքին խոր իմաստ ու բովանդակություն, որոնց մասին սկզբնաղբյուրները, ցավոք, շատ քիչ բան են պարունակում: Այդուամենայնիվ, հետազոտողները լիահույս են, որ դիտարկելով դրանք պարթևական քաղաքակրթական կառույցի հեռանկարում՝ հնարավոր է ուրվագծել դարաշրջանի հավաստի պատկերը: Հարկավ՝ միմիայն ընդհանրական գծերով<sup>39</sup>:

Արդեն արձանագրել ենք, Ք.ա. 60-ականների կեսերին Պարթևստանը որոշեց օգուտ քաղել հայոց Տերության անկումից: Հրահատ III արքան (Ք.ա.70-57թթ.) նախ փորձեց հայոց գահ բարձրացնել Տիգրան Կրտսերին և ապա՝ գրավել Կորդուքն ու Հայոց Միջագետքը: Երազում էր նաև «արքայից արքա» պատվանման մասին: Սակայն հանդիպեց Գ.ն. Պոմպեոսի կտրուկ հակազդեցությանը և ընկրկեց: Ստիպված էր ապավինել իրատեսական ծրագրերի, ուստի հրաժարվեց հայոց նկատմամբ բոլոր պահանջներից: Ավելին, առաջարկեց իր բարեկամությունը, ինչը Տիգրան II-ն ընդունեց զուսպ գոհունակությամբ<sup>40</sup>: Որողես II արքայի օրոք (Ք.ա.57-38 թթ.) արտաքին քաղաքական այս համակշռույթն ունեցավ ներքաղաքական անդրադարձ, և ներպարթևական տարասեռությունները համահարթվեցին: Ենթադրելի է, հենց այս հիմամբ էլ նա կարողացավ հույժ տպավորիչ հաղթանակ տանել Հռոմի նկատմամբ<sup>41</sup>: Նկատի ունենք Կրասոսի աղետալի արշավանքը (Ք.ա. 53 թ.):

Պարթևաց հաջորդ արքա Հրահատ IV-ի գահակալությունը (Ք.ա. 38-2 թթ.) բեկումնային էր: Այն սկսվեց Հռոմի նկատմամբ մի նոր տպավորիչ հաղթանակով. այս անգամ պարտություն կրեց Մ.Անտոնինուսը՝ մարտադաշտում թողնելով 35.000 հռոմեական զինվորի դիակ (Ք.ա. 36 թ.): Թվում էր, պարթևներին ոչինչ չի խանգարում զարգացնելու իրենց հաջողությունները: Սակայն ամեն ինչ հանկարծ ընդհատվեց: Նրանք ներքաշվեցին ներքին պառակտումների հորձանուտը և հրաժարվեցին արտաքին քաղաքական նախաձեռնությունից, իսկ Ք.ա. 30-ականների վերջերից ճանաչեցին Հռոմի աներկբա գերակայությունը՝

38 Տե՛ս **A.Momigliano**, Time in Ancient Historiography, in – Essay in Ancient and Modern Historiography, Oxford, 1975, p.198.

39 Տե՛ս **V.Sh. Curtis**, The Iranian Revival in the Parthian Period, in - V.Sh. Curtis, S.Steward, The Age of the Parthians. The Ideas of Iran, 2, London/New York, 2007, p.7.

40 **Ա.Ստեփանյան**, Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Դայքում: Մաս II. Արտահանության հոմոսոստիսը. Տիգրան II, Վեմ, 1 (29), 2010, էջ 62-63:

41 Տե՛ս **N.C.Debevoise**, A Political History of Parthia, New York, 1968, pp.76-78.

վերածվելով նրա «կրտսեր գործընկերոջ»<sup>42</sup>:

Այս և նման կարուկ կերպափոխությունների խորքային պատճառը հետազոտողները սովորաբար փնտրում են պարթևաց ընկերային համակեցության առանձնահատկությունների մեջ: Ընդամին, հատկանշվում է հետևյալ իրողությունը. իր սկզբնավորումից ի վեր վերջինս ուներ ռազմաքաղաքական իրադրության աներկբա հատկանիշեր: Նկատի է առնվում այն փաստը, որ պարթևաց պետության կայացման գործում առաջնային դերակատարությունը պատկանում էր ռազմական ուժին և գրավման փաստին: Հանրահայտ է, որ նրանք սերում էին «իրանականության քոչվոր տարակերպից»: Էթնիկ սերտ կապերի մեջ էին սկյութների, մասագետների, սակերի, դահերի, վրկանների հետ [Just.,XLI,1]<sup>43</sup>:

Ք.ա. III դարի կեսերից պարթևներն սկսեցին Իրանն «ազատագրել» մակեդոնական լծից: Նրանց համակեցությունը ռազմականացված էր: Շարժիչ ուժը իր նմանը չունեցող հեծելազորն էր՝ արագ, հատու, հույժ կազմակերպված: Հարդյունս ավելի քան հարյուրամյա նպատակամետ պայքարի՝ պարթևները միավորեցին Եփրատից մինչև Ինդոս ընկած տարածքը: Այն բնակեցված էր տարասեռ էթնիկ-մշակութային, ընկերային, քաղաքական, տնտեսական միավորներով՝ կազմակերպված մերթ իբրև ցեղապետություններ, մերթ՝ կիսանկախ աշխարհներ ու քազավորություններ, մերթ՝ քաղաքային համայնքներ: Յուրաքանչյուրն ապրում էր ինքնավար ռիթմով: Ուստի պարթևաց տերությունը զգալի չափով հիշեցնում էր համադաշնություն<sup>44</sup>: Դրան համընթաց (և թերևս այդ հետևանքով) նրանում բավական ներուժակ էր կենտրոնից բխող ռազմավարչական հրամայականը: Այն հաճախ ներկայանում էր կրոնաքարիզմատիկ, իրավական և մշակութային երանգավորմամբ<sup>45</sup>: Եվ պարթև Արշակունիներից մեծ ճկունություն ու կամք էր պահանջվում՝ ապահովելու առկա տարասեռությունների հավասարակշիռ վիճակը:

Սակայն դա նրանց միշտ չէ, որ հաջողվում էր: Դճնաժամային իրավիճակներում տերությունում գորանում էր լարումը՝ նախ և առաջ քաղաքակրթական երկու հակոտնյա բևեռների միջև: **Առաջինը** ներկայացնում էր հյուսիսի և հյուսիսարևելքի քոչվորական միջավայրը, որի հետ պարթևները կապված էին իրենց «պորտալարով»: Աստ գերակայում էին միագիծ ռազմավարչական մտայնությունն ու կամքը<sup>46</sup>: **Երկրորդը** ներկայացնում էր արևմուտքի (Հյուսիսային Միջագետք) հելլենիստական քաղաքային միջավայրը՝ Ապամեա, Եդեսա, Նիկեփոբիոն, Տիգրիսի Մելեկիս և այլք: Դրանում գերակայում էին արհեստները և հատկապես՝ միջազգային առևտուրը: Նաև՝ քաղաքային կենցաղը, ինքնավարությունը և «արևմտյան» արժեհամակարգը<sup>47</sup>: Ասվածին համապատասխան՝ բևեռներից յուրաքանչյուրն առաջնորդվում էր իր քաղաքական տեսլականով: Մի դեպքում դա ենթադրում էր կենտրոնաձիգ իշխանական կառույց ու կառավարում, մյուս դեպքում՝ ընդհակառակը, համադաշնային բազմաչափ հավասարակշռություն:

42 A. D.H. Bivar, op. cit., p.70.

43 Տե՛ս A.D.H. Bivar, op. cit., p.27; M.Brosius, The Persians.An Introduction, London/New York, 2006, pp.83-84.

44 Տե՛ս V.Sh. Curtis, op. cit., pp. 16-17.

45 Տե՛ս V.Sh. Curtis, op. cit., p. 21.

46 Տե՛ս K.Schipmann, The Arsacid Dynasty, Encyclopaedia Iranica, 2(1986), p. 258.

47 Տե՛ս P.M.Edwell, op. cit., pp. 19-27.

Հավելենք, որ «տափաստանի» և «հելլենիստական քաղաքի» ներհակությունն ուներ նաև հստակ արտաքին քաղաքական հետազիծ: Ինչպես վկայում է պատմությունը՝ առաջինը հետապնդում էր ծավալապաշտական նպատակներ: Եվ իր ծայրահեղ դրսևորմամբ անգամ խնդիր էր դնում վերականգնել Աքեմենյանների փառքը<sup>48</sup>: Մինչդեռ երկրորդի համար առավել գնահատելի էին երկու գերտերությունների՝ Պարթևստանի և Հռոմի օրինականացված և կանխատեսելի հարաբերությունները: Չի միայն դրանք կարող էին ապահովել կայունություն և բարեկեցություն<sup>49</sup>:

Մ.Կրասուսի արշավանքից հետո Պարթևստանում սկսեցին գերակայել «տափաստանի տրամադրությունները»: Դա էլ արդյունավորվեց թագաժառանգ Բակուրի ռազմարշավով՝ դեպի Ասորիք և Փոքր Ասիա (Ք.ա. 40-38 թթ.): Արդեն անդրադարձել ենք, այն ավարտվեց աղետով: Ընկավ թագաժառանգը, ջախջախվեց բանակը՝ բախվելով հռոմեական ռազմական մեքենային<sup>50</sup>: Խոր վիշտ ապրող Ռոդոս արքան դարձավ արքունի դավադրության զոհ: Թվում էր, քաղաքական ճոճանակի տրամաբանությամբ Պարթևստանում իշխանության պետք է գան «արևմտականները», սակայն դա տեղի չունեցավ: Պատճառը Մ.Անտոնինուսի արշավանքն էր: Նրա նկատմամբ տարած հաղթանակը, կասկածից վեր է, արդյունավորվեց ռազմատենչ կենսեռանդի նոր ակտիվությամբ: Հարդյունս՝ «տափաստանի տրամադրությունները» սկսեցին նորից զորանալ<sup>51</sup>:

Ի պատասխան դրա՝ հռոմեական կողմը որոշեց գործել զգույշ ու շրջահայաց: Նպատակն էր թուլացնել Պարթևստանը ներսից՝ սատարելով ընդդիմադիր ուժերին: Եվ պատշաճ առիթը շուտով ներկայացավ: Ք.ա. 31-30 թվականներին Հրահատ IV-ի դեմ ապստամբեց և նրանից գահը խլեց ոմն Տրդատ: Ամենայն հավանականությամբ՝ Արշակունյաց տոհմի շառավիղներից էր: Գահընկեց արքան ապաստան գտավ «սկյութների մոտ»: Սակայն զբաղված Անտոնինուսի և Կլեոպատրայի դեմ պատերազմով՝ Օկտավիանուսը հնարավորություն չունեցավ Տրդատին ցուցաբերել պատշաճ օժանդակություն: Վերջինս շուտով անկեց և իր հերթին ապաստանեց հռոմեական Ասորիքում: Եվս մեկ անգամ՝ Ք.ա. 26-25 թվականներին, Տրդատը կարողացավ հաջողության հասնել [Just.,XLII,5,6; Dio Cass., LI,18, 3]: Տիրացավ պարթևաց գահին և անգամ թողարկեց արծաթե դեմար ΦΙΛΟΡΩΜΑΙΟΣ (հռոմասեր) ներգրություն: Սակայն նորից հռոմեացիները նրան պատշաճ ձևով չսատարեցին, և նա նորից պարտվեց ու ապաստանեց Ասորիքում: Շուտով պարզ դարձավ, որ Տրդատի կարևորությունը հռոմեացիների համար այլևս ի չիք է դարձել<sup>52</sup>: Այս առումով նկատելի էր Հրահատ IV-ի նվիրակներին Օգոստոսի տված պատասխանը. «Ոչ Տրդատին կհանձնի, ոչ էլ պարթևաց դեմ նրան օգնություն կցուցաբերի» [Just.,XLII, 5, 4]:

Դիվանագիտության լեզվով՝ ասվածն առաջարկություն էր երկու տերություն-

48 Տե՛ս **U.Kahrstedt**, *Artabanos III und seine Erben*, Bern, 1950, S. 18-19.

49 Տե՛ս **М.М.Дьяконов**, *Очерк истории древнего Ирана*, Москва, 1961, с. 221-224; **Г.А.Кошеленко**, *Рим и внутриполитическая борьба в Парфии*, ВДИ, 3(1963), с. 56-63; **W.Ball**, *Rome in the East. The Transformation of an Empire*, London/ New York, 2000, p. 170.

50 Տե՛ս **E.Strugnell**, *Vendidius' Parthian War.Rome's Forgppten East Triumph*, *Acta Antica*, 46(2006), pp. 239-252.

51 Տե՛ս **K.Schippmann**, *op. cit.*, p.261; **M. Brosius**, *op. cit.*, p. 88.

52 Տե՛ս **D.Timpe**, *Zur augustischen Partherpolitik zwischen 30 und 20 v. chr.*, *Würzburger Jahrbücher für die Altertumswissenschaft*, 1(1975), S. 155-162.

ների հարաբերությունները վերակառուցելու ըստ նոր ձևաչափի<sup>53</sup>: Պարթևներն ընդունեցին դա, և սկսվեցին դիվանագիտական շփումները: Ենթադրելի է, դրանք ընթանում էին դանդաղ ու դժվար: Հերթական փակուղու ժամանակ հռոմեական դիվանագիտական առաքելության ղեկավար Տիբերիոս Կլավդիոսն սկսեց պարթևներին «անթաքույց վախ ներշնչել», թե Հռոմը պատրաստվում է հակապարթևական նոր պատերազմի: Եվ պահանջեց անհապաղ վերադարձնել Կրասուսի և Անտոնիոսի գերյալ զինվորներին: Պահանջեց նաև լեզիոնների գերյալ զինանշանները (captivi signaque) [Just., XLII, 5,11]:

Եվ սպառնալիքը ներագրեց: Բանն այն է, որ այդ ժամանակ Հրահատ արքայի վիճակը ծայր աստիճան անկայուն էր դարձել. նրանից սկսել էր դժգոհել անգամ «տափաստանը»: Իշխանությունը պահելու ճիգով նա «հնազանդորեն հայցեց հռոմեական ազգի բարեկամությունը» [Aug., RG, V,29]: Վերադարձրեց գերիներին և զինանշանները: Ի պատասխան դրա՝ հռոմեական կողմը պարտավորվում էր ճանաչել Եփրատն իբրև երկու տերությունների կայուն սահման [Strabo, XVI,1,28]: Պարտավորվում էր չսատարել պարթևաց գահի ընդդիմադիր հավակնորդներին, իսկ Տրդատին՝ հեռացնել Ասորիքից<sup>54</sup>:

Գա Զ.ա.20 թվականն էր, իսկ տարիներ անց Հրահատ IV-ն իբրև պատանդ (obsides) Օգոստոսին հանձնեց իր որդիներին ու թոռներին [Aug., RG, VI,32,2;Vell. Pat., II,94,4; Tacit.,II,1]<sup>55</sup>: Ի լրումն «հնազանդության», արքան այս պարագային առաջնորդվում էր նաև հստակ հաշվարկով՝ ազատվել գահի անցանկալի հավակնորդներից: Հիշենք, Արշակունիները գահաժառանգման հստակ և ամրագրված կարգ չունեին: Իշխանության խնդիրը լուծում էին «համաձայն նախնյաց սովորույթի»<sup>56</sup>: Այդ գործում գլխավոր դերակատարներն էին արքունիքը, պետական խորհուրդը և բանակը, որոնց տրամադրությունները հաճախ փոխվում էին՝ «ի տեղի» և «ի խնդիր»:

Նման տեղաշարժերի տրամաբանությունը, թվում է, իրավունք է տալիս ենթադրելու, թե Հրահատ IV-ն ի վերջո հակվել էր առ «արևմտականները»: Ասվածը թերևս մոտ է ճշմարտությանը, սակայն հընթացս ժամանակի նրա կառավարման մեջ սկսեց հատկանշվել մի նոր երանգ ևս՝ «արքունակենտրոնությունը»: Արքայի շրջապատում սկսեց գերակայել նրա մտերիմների նեղ շրջանակը՝ բանասարկություններով ու խարդավանքներով: Համաձայն սկզբնաղբյուրների՝ արքան հայտնվել էր իր երիտասարդ կնոջ՝ Մուսայի ազդեցության ներքո: Հմայիչ իտալացի մի ստրկուհի, ում Օգոստոսն էր նվիրել՝ «ի նշան անկեղծ բարեկամության»: Զ. ա. 2 թվականին վերջինիս ձեռամբ արքան թունավորվեց և մահկանացուն կնքեց<sup>57</sup>: Գահն անցավ Մուսայի որդի Հրահատակին՝ թույլ և անկամ մի պատանու, ում համար անսահման իշխանությունը ծանր փորձություն դարձավ:

Հրահատակի գահակալությամբ պարթևաց համակեցական միջավայրն աննախադեպ բևեռացավ: Իսկ արքունակենտրոնությունը հասավ ծայրահեղ

53 Տե՛ս **D.Timpe**, op. cit., S.163; **K.-H. Ziegler**, Die Beziehungen zwischen Röm und Partherreich, Wiesbaden, 1964, S. 46.

54 Տե՛ս **D.Timpe**, op.cit.,S. 164; **K.-H.Ziegler**, op. cit., S. 48-49.

55 Տե՛ս **A.D.H. Bivar**, op. cit., pp.66-67; **B. Isaac**, The Limits of Empire.The Roman Army in the East, Oxford, 1990, pp. XI-XII.

56 Տե՛ս **J.Wolski**, Remarques critiques sur les institutions des Arsacides, Eos, 46 (1952/1953), pp. 64-68.

57 Տե՛ս **K.Schipmann**, op. cit., p. 262.

չափերի: Արքան և իր շրջապատը սկսեցին ապրել ինքնաբավության միջավայրում՝ գրեթե անհաղորդ արտաքու գրգիռներին: Նա սկսեց հավատալ իր աստվածային ծագմանն ու առաքելությանը: Անգամ պաշտոնապես ամուսնացավ սեփական մոր հետ, ինչն առաջ բերեց պարթևաց անթաքույց արհամարհանքը [Jos. Flav., Ant., Iud., XVIII, 42]<sup>58</sup>: Բ. հ. 4 թվականին կազմակերպվեց դավադրություն, և Հրահատակը լքեց պատմության ասպարեզը:

Անկալունությունը Պարթևստանում ահագնացավ: Նախ՝ գահն անցավ Որոդես III-ին, ով, թվում է, վայելում էր «տափաստանի» օժանդակությունը: Բայց անասհման դաժան էր, ինչը տեղիք տվեց բուռն դժգոհությունների, որոնցից էլ շտապեցին օգտվել «արևմտականները»: Ապստամբեցին և այս հերթական արքային էլ գահազուրկ արեցին: Այս նվիրակներ հղեցին Հռոմ՝ «Օգոստոսից խնդրելով» Վոնոնին՝ Հրահատ IV-ի որդուն: Պատվավոր պատանդի կարգավիճակով նա արդեն քսան տարի ապրում էր Հռոմում: Բ.հ. 6 թվականին Օգոստոսի «բարեհաճ սատարմամբ» վերջինս մտավ Տիգրան և զբաղեցրեց Արշակունյաց թափուր գահը [Aug., RG, VI,33; cf. Tacit., Ann., II, 1-2; Jos., Flav., Ant., Iud., XVIII, 46]<sup>59</sup>:

Ի հետևանս վերոհիշյալ բոլոր կերպափոխությունների՝ պարթևաց համակեցությունը նոր թվականության սահմանազլխին այլևս դադարել էր ապրել քաղաքակրթական միասնական ռիթմով և ժամանակով: Այն փշուր-փշուր էր եղել, և նրա առանձին միավորներն առաջնորդվում էին սոսկ հատվածային շահերով ու արժեքներով: Հենց դա էլ տեղիք տվեց ծայրահեղ արքունակենտրոնության: Կորպորատիվ եսակենտրոնության այս դրսևորումն արդի ըմբռնումներում ներկայացվում է իբրև քաղաքակրթական ճգնաժամի ստույգ ցուցիչ: Այլ խոսքով՝ այն, ինչ անկարող եղան կատարել դաժան պատերազմները, կատարեց խաղաղությունը: Թերևս հենց այս իրողությունը նկատի ունեն Օգոստոսը՝ հատկանշելով, թե պարթևները խոնարհվեցին «ոչ թե պարտված պատերազմում (non bello superatus), այլ՝ ձգտելով մեր բարեկամությանը» [Aug., RG, VI, 32; cf. Strabo, VI,4,2; Tacit., Ann., VI,37; XII,11]:

Թվում էր, Օգոստոսի վարչակարգի քաղաքականությունն ի վերջո պսակվել է հաջողությամբ, և արևմտամետությունը պարթևական միջավայրում այլևս կայացած իրողություն է: Մանավանդ, որ հռոմեական գերակայությունն արդ տարածվում էր նաև Ատրպատականի և Ադիաբենեի նկատմամբ: Եվ դրանցում գահակալում էին հռոմեական դրածոները՝ Արտավազդը և Արտախարեսը [Aug., RG, VI, 32]<sup>60</sup>: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, դա հռոմեացիների հերթական պատրանքն էր:

Տրամադրությունների ճոճանակը Պարթևստանում շուտով սկսեց շարժվել հակառակ ուղղությամբ: Համաձայն Տակիտոսի հանրահայտ բանաձևի՝ պարթևները Հռոմից ավելի շուտ արքաներ էին խնդրում, քան պահում նրանց (malle Romana petere reges quam habere) [Tacit., Ann., XII,14]: Նույն տրամաբանությամբ նրանք սկսեցին դժգոհել Վոնոնից, թե հեռացել և չի հարգում պարթևական սովորույթները: Շեշտում էին. «Չի մասնակցում արքայական որսերին ու խնջույքներին» [Tacit., Ann., II, 58]: Նախաձեռնությունն այս անգամ էլ իրենց ձեռքն առան

58 Տե՛ս **N.C.Debevoise**, op. cit., p. 148.

59 Տե՛ս **K.Schipmann**, op.cit., p.263; **N.C.Debevoise**, op. cit., pp.151-152.

60 Տե՛ս **F.Grosso**, La Media Atropatene e la politica di Augusta, Athenaeum, 35 (1957), pp.242-244.

«տափաստանի» ուժերը և ապստամբեցին: Շարժման կենտրոնը դարձավ Ատրպատականը, որտեղ իշխանությունից արդեն հեռացվել էին հռոմամետ ուժերը: Գահն անցավ Արտավանին, ով սերում էր «դահական միջավայրից» և Արշակունի էր միայն մայրական կողմից [Tacit., Ann., II, 3, VI, 36; Jos. Flav., Ant. Iud., XVIII, 48]: Նա էլ գլխավորեց «իրանցիների հակահռոմեական պայքարը»<sup>61</sup>:

Ք.հ.12 թվականին Վոնոնը գրկվեց գահից և Արտավան II-ը, գալով իշխանության, հայտարարեց, թե վերջ է դնում Պարթևստանի ստորակարգված վիճակին և անգամ նպատակ ունի վերականգնել Աքեմենյանների երբեմնի փառքը [Tacit., Ann., VI, 31; Suet., Tib., 66; Dio Cass., LVIII, 26]: Շուտով հռոմեացիներն առիթ ունեցան համոզվելու, որ Արտավանը պարթևների հերթական արքան չէ, որ նրա խոսքերը աշխարհաքաղաքական նոր ծրագիր են պարագծում: Եվ նրանց պատասխանն անմիջական էր ու սթափ: Պարթևների նկատմամբ հռոմեական վարչակազմը փոխեց իր արժեսանդակը. հրաժարվեց «խոնարիվածներ» եզրից և վերադարձավ ավանդական «արժանի ախոյաններ (*ἀντίπαλοι*)» եզրին [Strabo, XI, 9, 2]: Այս առումով թերևս ավելի ճշգրիտ էր Պոմպեոս Տրոգուսը. «Պարթևները արդ տիրում են Արևելքին՝ հռոմեացիների հետ, ասես, բաժանելով աշխարհը (*velut divisione orbis cum Romanis facta*)» [Just., XLI, 1]<sup>62</sup>:

Մեկնարկելով ասվածից՝ արդի հետազոտողները հակված են մտածելու, որ հենց այդժամ իր ավարտին հանգեց պարթևա-հռոմեական հարաբերությունների մի ամբողջ դարաշրջան: Վերականգնվեց և իր իրավաքաղաքական հիմնավորմանն էր սպասում «բնակեցված աշխարհի երկմիասնության» տեսությունը<sup>63</sup>:

### 3. Մեծ Հայքը պատմության ճամփաբաժանում

Հռոմ-Պարթևստան քաղաքակրթական անհամաչափությունն իր խոր ազդեցությունն ունեցավ Միջին Արևելքում ձևավորվող աշխարհաքաղաքական իրավիճակի վրա: Իրավիճակ, որի կարևոր դերակատարներից մեկն էլ Մեծ Հայքն էր: Հիշենք, որ տոհմիկ ավագանու աստարմամբ Արտաշիսյանների թագն այդժամ կրում էր Արտաշես II-ը (Ք.ա.30-20թթ.): Նրա իշխանությունը տարածվում էր նաև Ատրպատականի նկատմամբ: Հայդ՝ Արտաշատը թերևս վերականգնել էր տարածաշրջանային կենտրոնի իր կարևորությունը այս անգամ արդեն՝ հակահռոմեական կեցվածքով: Արքան կոտորել էր Մեծ Հայքում տեղակայված հռոմեական զինվորներին և գործարարներին (*publicani*)՝ ի պատասխան հոր նկատմամբ «Անտոնինոսի անբարո արարքի»: Եվ այդ առիթով Հռոմը չէր շտապում ճանաչել նրա իշխանությունը: Ուստի Օգոստոսն անպատասխան թողեց Արտաշեսի ուղերձ-պահանջը՝ վերադարձնել եղբայրներին, որոնք Աղեքսանդրիայից տարվել էին Հռոմ և ապրում էին պատվավոր պատանդի կարգավիճակով [Dio Cass., LI, 16, 2]<sup>64</sup>:

61 U.Kahrstedt, op. cit., S.14-15.

62 J.Neusner, Parthian Political Ideology, Iranica Antica, 3 (1963), pp.51-53.

63 Տես K.-H.Ziegler, op. cit., S.48; A.D.H. Bivar, op. cit., p.70.

64 Ոչնչով հիմնավորված չէ այն ենթադրությունը, թե Արտաշես II-ն, այնուամենայնիվ, ճանաչել է Գռոմի գերակայությունը: Տես Զ.Աստուրեան, Քաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի և Գռոմվնայ, Վենետիկ, 1912, էջ 67; M.-L.Chaumont, L'Arménie entre Rome et l'Iran. De l'avènement d'August à l'avènement de Dioclétien, ANRW, T.II, H1b., 1, Berlin, 1974, p.74.

Արտաշես արքան գործում էր վստահ և նպատակասլաց: Ի պատասխան դրա՝ Օգոստոսն իր կառավարման հենց սկզբից խնդիր դրեց ակտիվացնել Մեծ Հայքին հարակից հռոմեական դաշնակիցներին՝ Կոմագենե, Կապադովկիա, Փոքր Հայք, Պոնտոս<sup>65</sup>: Լիահույս էր, որ ապագայում ի զորու կլինի արմատապես փոխել իրավիճակը: Եվ նրա հաշվարկը շուտով արդարացավ: Չպետք է մոռանալ, որ նախորդ դարաշրջանում ծայր առած տնտեսական ճգնաժամը Մեծ Հայքում շարունակվում էր: Քաղաքային կյանքը, արհեստներն ու առևտուրը հույժ տկարացել էին: Եվ այն աստիճան, որ ոսկե ու արծաթե դրամների թողարկումն իսպառ վերացել էր: Շրջանառում էին առավելաբար պղնձե դրամները (դրաքմե, օբողոս, քաղկոս)՝ տեղական շուկայի տկարացած պահանջները բավարարելու համար<sup>66</sup>: Հարդյունա՝ երկրում սկսել էին գերակայել ավանդական համակեցական կառույցներն ու արժեքները:

Թվում էր, ասվածը պետք է հավելյալ խթան հանդիսանար հայոց պարթևամետոքյան համար, սակայն կատարվեց ճիշտ հակառակը: Մեծ Հայքի հակահռոմեական կեցվածքը սկսել էր կորցնել իր աշխարհաքաղաքական կարևորությունը: Հարկավ, դա աղերսված էր Պարթևստանի խոնարհման հետ: Ենթադրելի է մեկ այլ կարևոր պատճառ. հայոց ռազմավարչական ավագանին, որը բավարարված չէր Արտաշես II-ի գահակալմամբ, պատրաստ էր պատեհ առիթի պարագային դիմել վճռական գործողությունների: Ավելին ասել, ցավոք, հնարավոր չէ, զի սկզբնադրյուններն էական ոչինչ չեն պարունակում: Ուստի մնում է ապավինել միայն պատմական իրադարձությունների ընդհանուր տրամաբանությանը:

Իսկ դրանք գալիս են հաստատելու վերն արված ենթադրությունը. Մեծ Հայքին սպասում էին արմատական տեղաշարժեր: Ինչպես արձանագրեցինք վերը, Ք.ա.20-ականների վերջերին Հռոմի և Պարթևստանի միջև սկսվել էին դիվանագիտական շփումներ: Եվ դրանց ծիրում, հարկավ, առանձնահատուկ սևեռման առարկա էր Մեծ Հայքի հիմնախնդիրը: Ենթադրելի է, որ տվյալ դեպքում հռոմեական դիվանագիտությունը ձգտում էր ստանալ հավաստիացումներ առ այն, որ պարթևները ճանաչում են իրենց գերակա շահերն այդ երկրում: Եվ պարթևական կողմը, կասկածից վեր է, տվել էր դրանք [Vell.Pat., II, 100,1; Suet., Aug., XXI,3]:

Դրանից հետո ամեն բան ընթացավ կանխատեսելի կորագծով: Մեծ Հայքում ակտիվացավ հռոմեական դիվանագիտությունը<sup>67</sup>: Բացառված չէ՝ նաև դրանք: Հարդյունա՝ արքունիքում դավադրություն նյութվեց, որին էլ զոհ գնաց Արտաշես II-ը (per dolum propinquorum) [Tacit., II,3,4], որն իր արքայատան թերևս վերջին նշանավոր գահակալն էր:

Ք.ա. 20 թվականին հռոմեական լեգիոնի ուղեկցությամբ Մեծ Հայք ժամանեց Օգոստոսի հոգեորդի Տիրերիոս Կլավդիուսը և հանդիսավոր ծիսակարգով գահ բարձրացրեց Տիգրան III-ին [Vell. Pat., II, 94, 3; Suet., Tib.,9,1; Dio Cass.,LIV,9,4-5]<sup>68</sup>: Երկրի հետագա պատմությունը բավական մշուշոտ է, դեպքերի ժամանակագրությունը՝ տարտամ: Չի առկա պատմական տեղեկույթը հատվածային է և կցկտուր: Ուստի խնդիր չունենք մտնել մանրամասնությունների մեջ՝ զի-

65 Տե՛ս **E.Gruen**, *The Expansion of the Empire*, CAH, v.10, Cambridge, 2006, pp. 151-154.

66 Տե՛ս **P.Z.Bedoukian**, *Coinage of the Artaxiads of Armenia*, London, 1978, p. 31.

67 Համաձայն Դիոն Կասիոսի՝ հռոմանետ ուժերն անգամ պատվիրակներ են ուղարկել Օգոստոսի մոտ խնդրելով Արտավազդ II-ի պատանդ որդիներից մեկին՝ հայոց գահը զբաղեցնելու համար [Dio Cass., LIV,9,4]:

68 Տե՛ս **Յ. Մանանդյան**, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հ.1, Եր., 1944, էջ 290-291:



տակցելով, որ անկարելի է հասնել դրանց գոնե մոտավոր արժանահավատության: Կփորձենք լրացնել պարապը՝ բացահայտելով իրադարձությունների ընդհանուր տրամաբանությունը: Եվ այդ առումով նախընտրելի ենք համարում համաբերել սկզբնաղբյուրների վկայությունները (Տակիտոս, Օգոստոս, Վ.Պատերկուլոս, Դիոն Կասսիոս, Հ.Փլաբիոս, Սվետոնիոս) դրամագիտական նյութի հետ:

Հուսկ ցանկանում ենք սկզբից ևեթ հատկանշել հետևյալ իրողությունը. իր երկարամյա կառավարման ընթացքին Օգոստոսը փորձարկել է Մեծ Հայքի հիմնախնդրի կարգավորման մի շարք (երբեմն՝ տարամետ) հարացույցեր: Սակայն էական առաջընթաց չի արձանագրել: Ինչպես կտեսնենք ստորև, հիմնական պատճառն այն էր, որ նա անտեսում էր հայոց ինքնութենական ներուժը: Մի իրողություն, որն իր կնիքն է դրել ինչպես հռոմեական պաշտոնական գաղափարախոսության, այնպես էլ պատմագրության վրա:

**Հարացույց առաջին՝** Մեծ Հայքը հռոմեական պրովինցիա: Հիմնախնդրի լուծման մի տարբերակ, որը, ինչպես ցույց է տալիս պատմությունը, հայհռոմեական հարաբերություններում սոսկ մարզինալ կարգավիճակ ուներ: Արդեն արձանագրել ենք, առաջինը դա փորձել էր ներդնել Մ.Անտոնիոսը, բայց որևէ հաջողության չէր հասել<sup>69</sup>: Ինչ վերաբերում է Օգոստոսին, ապա նա տվյալ տարբերակին վերագրում էր ավելի շուտ պայմանական, քան իրական բովանդակություն: Պայմանական՝ լոկ դրա արժարժման մտադրությամբ: Եվ պատահական չէ, որ իր «Կտակում» վերջինիս մասին նա խոսում է (որքան էլ տարօրինակ հնչի) հենց ժխտելու նպատակադրությամբ. «Մեծ Հայքը, զի սպանվել էր նրա Արտաշես արքան, թեպետ ի գորու էի վերածել պրովինցիայի (cum possem facere provinciam), նախընտրեցի հանձնել Տիգրանին՝ Արտավազդ արքայի որդուն, Տիգրանի թունանը: Եվ արեցի այդ ըստ օրինակի նախնյաց մերոց» [Aug., RG, V, 27]:

Ժխտելով Մեծ Հայքը պրովինցիայի վերածելու հնարավորությունը՝ Օգոստոսը նախ և առաջ նկատի ուներ այդ քայլի անարդյունականությունը՝ ինչպես վարչական, քաղաքական, տնտեսական, այնպես էլ աշխարհաքաղաքական առումներով: Իբրև ասվածի տրամաբանական շարունակություն՝ նա հակադարձ համեմատական կապ էր տեսնում Մեծ Հայքի և Եգիպտոսի հիմնախնդիրների միջև: Երկիր, որն իր բոլոր նյութական և մարդկային պաշարներն ի սպաս էր դրել Մ. Անտոնիոսի գործին: Կարծում ենք, հենց դա էլ կազմում է անդրտեքստային այն պատճառը, համաձայն որի «Կտակի» Մեծ Հայքին վերաբերող հատվածը «հանկարծ» սկսվում է Եգիպտոսին վերաբերող նախադասությամբ. «Եգիպտոսը հավելեցի հռոմեական ազգի տիրապետությանը» [Aug.,RG,V,27]: Նկատի ունի դրա ռազմակալումը և կայսերական պրովինցիայի վերածումը<sup>70</sup>:

**Հարացույց երկրորդ՝** Մեծ Հայքը խնդրարկու (կլիենտ) պետություն ընդ իշխանությամբ Արտաշիսյանների: Հիմնախնդրի լուծման տարբերակ էր, որի բովանդակությունը հարկ է լծորդել տեքստի «ըստ օրինակի նախնյաց մերոց (maiorum nostrum exeplo)» բանաձևի հետ: Անտարակույս, այն հղում է ենթադրում դեպի Մեծ Հայքի հետ Գն. Պոմպեոսի հաստատած հարաբերությունները: Սակայն ոչ այն ձևաչափով, որն ամրագրվել էր հրնթացս Արտաշատի դաշնագրի

69 Տե՛ս Ա.Ստեփանյան, Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Հայքում: Մաս III: Համասեռ հավասարակշռության պահպանման ճիգը Արտավազդ II-ի դարաշրջանում, Վեմ, 3 (31), 2010, էջ 75-76:

70 Տե՛ս H.H. Scullard, op. cit., p. 215.

կնքման: Այլ այն, որը ներկայացվել էր Ծերակույտին և արարողակարգվել զորավարի շքահանդեսի ժամանակ (տրիումֆ): Արդեն անդրադարձել ենք, որ հենց դրանով էլ Մ.Կրասսուսը ժամանել էր Արևելք և Արտավազդ II-ից պահանջել էր դաշնակցին պատշաճող ծառայություններ:

Ասվածին հավելենք, որ Օգոստոսի դարաշրջանում դաշնակիցն այլևս անվերապահորեն համահավասարեցվում էր խնդրարկու պետությանը<sup>71</sup>: Պետություն, որի կարգավիճակը ստորակարգված էր հռոմեական մեգահամակարգի ինքնիշխանությանը: Հենց այդ կարգավիճակը նկատի ունենալով Օգոստոսը՝ Արտաշիսյան գահը տրամադրելով Տիգրան III-ին: Նա եղել էր եգիպտական գերության մեջ, ապա «ազատագրվել» և շուրջ տասը տարի ապրել Հռոմում՝ «ընդ հոգածությամբ Օգոստոսի»: Սովորել էր լատիներեն, յուրացրել հռոմեացիների օրենքներն ու բարքերը, ընտրախափի շրջանում ձեռք բերել անհրաժեշտ կապեր ու հարաբերություններ: Համաձայն հռոմեական արժեհամակարգի՝ դրանք «խնդրարկու արքա» կարգավիճակի կարևոր գումարելիներն էին: Ի հաստատումն ասվածի՝ կարելի է ցուցանել Օգոստոսի ոսկե ու արծաթե դրամները՝ թողարկված Տիգրան III-ի գահակալության կապակցությամբ: Դրանց ներգրույթները հույժ խոսուն են. Armenia capta (Հայքը գրավյալ), Armenia recepta (Հայքը վերագրավյալ) [cf. Horat., Epist., I,12, 26-27; Vell. Pat., II, 94; Suet., Aug., 21,3]: Էլ չենք խոսում պատկերագրության մասին, որտեղ երբեմն ներկա է «խոնարհ ու բազկատարած հայր»<sup>72</sup>:

Մինչդեռ հայոց դրամագիտական նյութը տրամագծորեն այլ պատկեր է պարագծում: Նկատի ունենք նախ և առաջ Տիգրան III-ի պղնձե դրաքմեն: Դիմերեսին պատկերված է արքան՝ Արտաշիսյանների ավանդական խույրով և ապարոշով: Հետերեսին տղամարդու պատկեր է՝ կանգնած հասակով մեկ, արքայական պատմունճանով և խույրով: Չախ ձեռքին միզակ է, իսկ աջին՝ հավանաբար, վահան: Պատկերը երիզված է ուղղահայաց (պարթևական ոճի) ներգրույթներով: Դիմացից՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ (Մեծի Արքայի Տիգրանի): Հետևից՝ ΦΙΛΟΠΑΤΡΟΣ ΚΑΙ ΦΙΛΕΛΛΕΝΟΣ (Հայրասեր և Հունասեր)<sup>73</sup>: Անհավանական է ենթադրել, թե դրաքմեի ինչպես դիմերեսին, այնպես էլ հետերեսին արքան պատկերել է ինքն իրեն: Մինչդեռ երկրորդ ներգրույթը հիմքեր է տալիս ենթադրելու, որ դիտարկվող պատկերը կարող է պատկանել արքայահորը՝ եղերամահ Արտավազդ II-ին: Եթե տվյալ ենթադրությունը ճշմարիտ է, ապա սխալի չնչին հավանականությամբ կարելի է պնդել, որ Տիգրան III-ն իր իշխանության օրինականությունը պայմանավորում էր Արտաշիսյանների գահակալման ընդունված կարգով: Բայց ոչ՝ ըստ Օգոստոսի «բարի և հոգատար կամքի»:

Դրամագիտական նյութը հնարավորություն է տալիս խոսելու նաև Տիգրան III-ի իշխանության հիմնավորման այլ դիտանկյունների մասին: Նախ, Արտավազդ II-ի նման նա հաստատագրում էր, որ հրաժարվում է Նպատի աշխարհաժողովից: Հիրավի, նրա խույրի ութանկյուն Լոգոսը պատկերված է առանց երկու արծիվների:

71 Տե՛ս **D.Braud**, Rome and the friendly King. The Character of the Client Kingship, London/New York, 1984, pp.22-26; **A.A.Barret**, Claudius, Gaius and the Klient Kings, Classical Quarterly, 40(1990), pp. 284-286.

72 **H.Mattingly, E.A.Sydenham**, The Roman Imperial Coinage, v.1 (Augustus to Vitellius), London, 1925, p. 63 (n.46-48).

73 Տե՛ս **P.Z.Bedoukian**, op. cit., p. 70 (n.137).

Նույնը կրկնվում է արքայի համարյա բոլոր դրամներում<sup>74</sup>: Սակայն Տիգրան III-ը չի զնացել հայոց միջավայրում կաստայական տարբերությունների խորացման ուղիով: Այլ փորձել է գտնել իր ընկերային հենարանի ընդլայնման նոր հնարավորություններ: Այդ մասին վկայում են նրա պղնձադրամները (chalci), որոնց հետերեսին պատկերվում են երբեմն Միիր-Ապոլոնի, երբեմն՝ Վահագն-Հերակլեսի խորհրդանիշերը: Առաջին դեպքում՝ ձի, մարտակառք (biga), ագռավ, առյուծ: Իսկ երկրորդ դեպքում՝ շանթերի խուրձ, շահին, սպառազեն զինվոր<sup>75</sup>:

Եթե այս ընկալումը ճշմարիտ է, ապա կարելի է խոսել այն մասին, որ Տիգրան III-ը խնդիր է ունեցել հայոց միջավայրում հաստատել աստվածային քառորդություն՝ Արամազդ, Անահիտ, Միիր, Վահագն: Ընկերային կյանքի անդրադարձով դա նշանակում էր ներքին տարանջատումների հաղթահարման և խաղաղության հաստատման աներկբա միտում: Պատմության փորձը հուշում է, որ նպատակին հետամուտ՝ արքան պետք է տարանջատեր իր իշխանությունն առանձին հանրախմբերից և դրան հաղորդեր ընդհանրականություն (ունիվերսալիզմ):

Կարծում ենք, հենց այդ տրամաբանությամբ էլ առաջնորդվում էր Տիգրան III-ը՝ վերադառնալով «վերադասության» այն հարացույցին, որը կիրարկում էին իր նախնիները: Եվ մղումն այնքան զորավոր էր, որ իր կյանքի վերջում (երբ իշխանությունն այլևս կայուն էր ու ապահով) նա անգամ որոշել էր վերականգնել Նպատի աշխարհաժողովը: Այդ մասին վկայում է նրա միակ պղնձադրամը, որտեղ արքայական խուրյի Լոգոսը կրկին երիզված է երկու արծիվների պատկերներով՝ աջից և ձախից<sup>76</sup>:

Հայոց արքայի իշխանական վերադասության մյուս դիտանկյունն ուներ սրբազնային բովանդակություն: Այլ խոսքով՝ ենթադրում էր նրա անձի աստվածացումը: Ի հաստատումն ասվածի՝ պատշաճ ենք համարում անդրադառնալ նրա պղնձադրամների այն շարքին, որի ներգրույթը վկայում է. ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ ΘΕΟΥ (Մեծի Արքայի Տիգրանի Աստծո)<sup>77</sup>: Այո, իրեն աստված հռչակելով՝ Տիգրան III-ն աշխատում էր վերականգնել նախնյաց (Տիգրան II, Արտավազդ II) ավանդույթը: Սակայն այս հոլովույթն ուներ նաև իր հարակա իմաստը, զի զուգահեռվում էր Հռոմում թափ առնող Օգոստոսի անձի աստվածացման գործընթացին<sup>78</sup>: Իսկ դա, կասկածից վեր է, խաթարում էր հայոց արքայի աներկբա ու անպայման ստորակարգության կարծրակերպը:

Հատկանշելի է մեկ այլ իրողություն նույնպես. տվյալ ընդդիմադիր կեցվածքը համադրվում էր Տիգրան III-ի չափավոր պարթևամետությամբ: Հետազոտողները վերջինիս հետքերը տեսնում են նրա այն դրամներում, որոնց «պարթևական ոճավորումը» (մորթավոր դիմապատկեր, ուղղահայաց կամ քառանկյունի

74 Տե՛ս **P.Z. Bedoukian**, op. cit., p. 31.  
75 Տե՛ս **P.Z. Bedoukian**, op. cit., pp. 70-72 (n. 138, 139, 140, 141, 142, 146). Յստակ վկայված է, որ ձին, մարտակառքը, ագռավը, առյուծը Միիրի պաշտամունքի նվիրագործության աստիճաններ էին. **D. Ulansky**, Solving the Mithraic Mysteries, Biblical Archeology Review, 20(1994), pp. 40-53: Համապատասխանաբար կարելի է ենթադրել, որ շանթերի խուրձը, շահինը, սպառազեն զինվորն աղերս ունեն Վահագնի նվիրագործության հետ:  
76 Այս դրամը սովորաբար վերագրվում է Տիգրան IV-ին՝ առանց որևէ փաստարկի կամ իրադարձությունների տրամաբանությունը հաշվի առնելու: Առաջնորդվում են բացառապես «դիմապատկերների նմանությամբ»: **P.Z. Bedoukian**, op. cit., p. 75 (n. 159).  
77 Տե՛ս **P.Z. Bedoukian**, op. cit., p. 72-73 (n. 143, 144, 145, 146).  
78 Տե՛ս **J. Pollini**, Man or God. Divine Assimilation in the Late Republic and Early Empire, in – Between Republik and Empire. Interpretations of Augustus and his Principate, Berkeley, 1990, pp. 345-347.

ներգրույթ) կասկած չի հարուցում<sup>79</sup>: Հայրմ` թերևս կարելի է ենթադրել, որ արքան փորձում էր հետևել համասեռ քաղաքակրթական հոմոնոտասիսի այն հարա-ցույցին (և...և), որի ավանդույթները տակավին կենսունակ էին հայոց միջա-վայրում: Այլոքեն` ձգտում էր համարժեք հարաբերություններ գարգացնել իր գորեղ հարևանների հետ:

Եվ տվյալ միտումը արդիական էր ոչ միայն հայոց միջավայրում: Հայտնի է, որ Ք.ա. 20 թվականի համաձայնագրով վերականգնվում էր Ատրպատականի ինքնիշխանությունն ընդ գահակալությամբ Մար Արտավազդի որդի Արիոբար-զանի [Aug., RG., VI, 32; Strabo, XII, 1, 4; Dio Cass., LIV, 9, 2]<sup>80</sup>: Հռոմեական կողմը հուսով էր, թե նա կներքավի տարածաշրջանային հակասությունների մեջ, և դա իրեն հնարավորություն կտա կառավարել իրադրությունը` «բարեգործելով» կողմերից մեկին կամ մյուսին: Սակայն այդ հույսերը լիովին չարդարացան. մարերը «հարեցին Կայսեր բարեկամությանը` հաճոյանալով միաժամանակ նաև պարթևներին» [Strabo, XI, 13, 2]: Այդուհանդերձ, նրանք նաև չէին հրաժարվում տարածաշրջանային կենտրոն դառնալու տեսլականից: Եվ ինչպես կտեսնենք ստորև, պատրաստ էին պատեհ առիթի դեպքում դիմելու գործնական քայլերի:

Սակայն վերադառնանք Տիգրան III-ին և փորձենք ի մի բերել նրա կապակ-ցությամբ ուրվագծված հավանականությունների շղթան: Դրանք ներկայանում են երկու տարբեր ալգորիթմերով` հռոմեական և հայկական: Առաջինը միտված է Մեծ Հայքն անվերապահորեն ներկայացնելու խնդրարկու պետության կարգա-վիճակով: Մի իրողություն, որն արձանագրված է հռոմեական գրույթի և քարոզ-չության տարբեր ժանրերում` պատմագրությունից մինչև բանաստեղծություն, ծեսից մինչև դրամագիտություն: Դրանց հիմամբ (ու ոգով) հետազոտողներից շատերն այսօր էլ շարադրում են պատմությունը<sup>81</sup>: Ինչ վերաբերում է երկրորդ ալգորիթմին, ապա դա կառուցված է ըստ հայոց դիտանկյան: Արձանագրված է սահմանափակ քանակությամբ տեղական դրամների վրա, որոնք միշտ չէ, որ արժանանում են պատշաճ ուշադրության և (որ կարևոր է) մեկնաբանության:

Երկու ալգորիթմերը գործառու էին զուգահեռաբար և (որքան էլ տարօրինակ հնչի) չհանգեցրին կողմերի լուրջ բախման: Օգոստոսի վարչակարգը համարում էր, թե Pax romana-ի շրջանակներում Մեծ Հայքի հիմնախնդիրը ստացել է իր համալիր լուծումը<sup>82</sup>: Ուստի չէր շտապում «մտնել մանրամասնությունների մեջ»: Իսկ հայոց արքան, օգտվելով հռոմեական կողմի «անտարբերությունից», ձգտում էր համախմբել հայոց համակեցական միջավայրը, որը բևեռացել էր ի հետևանս վերջին տասնամյակների ցնցումների: Նման արդյունքով, հավանական է, Ք.ա. 6 թվականին ավարտվեց Տիգրան III-ի գահակալությունը` տևելով շուրջ մեկ ու կես

79 Տե՛ս **P.Z.Bedoukian**, op. cit., p. 31. Ուղղահայաց կամ քառանկյունի ներգրույթները Ն.Ա.Դիրվաուզը բնութագրում է իբրև «Parthian titles»: Այսինքն «պարթևական (ոճի) տիտղոսագրեր»: **N.C.Debevoise**, op. cit., p.142. Արտահայտության թյուրըմբռնումը տեղիք է տվել մի ցավալի անճշտության, որն այսօր էլ շրջանառում է: Համաձայն դրա Տիգրան III-ի դրամներում, իբրև թե, կան «պահլավերեն մակագրություն-ներ»: Տե՛ս **Գ.Սարգսյան**, Հայաստանը Արտավազդ Բ-ի և նրա հաջորդների ժամանակաշրջանում, 3ԺՊ, Եր., 1971, էջ 632.

80 Տե՛ս **F.Grosso**, op.cit., pp. 243-244; **R.Seagner**, Non sine Medos equitare inultos. Horace, the Parthians and Augustan Foreign Policy, Athnaeum, 58(1980), pp. 109-110

81 Ավաճն իր անփոփոմն է ստացել, մասնավորաբար, The Cambridge Ancient History կոլեկտիվ աշխատության հին և նոր հրատարակությունների մեջ: Տե՛ս **E.Gruen**, The Expansion of Empire under Augustus, CAH, N10, pp. 158-163.

82 Տե՛ս **G.W.Bowersock**, op.cit., p.58.

տասնամյակ<sup>83</sup>:

Համախմբումի հենց այդ պաշարն էլ ապահովեց իշխանության անցումը հանգուցյալ արքայի որդուն՝ Տիգրան IV-ին: Դա կատարվեց սահուն՝ ըստ Արտաշիսյանների գահակալման կարգի, առանց Օգոստոսի «բարի և հոգատար կամքի»: Հռոմեական վարչակարգը որոշեց շտկել իրավիճակն ու իր հեղինակությունը՝ բանակ ուղարկելով Մեծ Հայք: Այդ նպատակով. «Տիբերիոսին հինգ տարով տրամադրեց տրիբունական իշխանություն: Նրան հանձնարարեց Հայքը (προσέταξε τὴν Ἀρμενίαν), որն օտարվել էր [մեզանից] Տիգրանի մահից հետո» [Dio Cass., LV,9,4]: Սակայն շուտով Օգոստոսը փոխեց մտադրությունը և պատվիրեց Տիբերիոսին հեռանալ Հռոդոս կղզի: Այս անսպասելի շրջադարձը հետազոտողները սովորաբար պայմանավորում են կայսերական ընտանիքի անդամների փոխադարձ անվստահությամբ և մրցակցությամբ [Dio Cass.,LV,9,7-8]<sup>84</sup>: Թեև դա անժխտելի փաստ է, սակայն, կարծում ենք, առկա էր մեկ այլ կարևոր պատճառ ևս, որի մասին սկզբնաղբյուրները նախընտրում են լռել: Օգոստոսի շրջապատը (թերևս նաև Տիբերիոսը) կարողացել էր համոզել նրան, որ ռազմարշավի բարեհաջող ելքը կասկածելի է:

Հավանաբար, փաստարկներում շեշտադրվում էր Մեծ Հայքի ներքին հարաբերական կայունությունը: Եվ բացառված չէ, որ հենց այդ մտայնությունն էլ հիմք է ծառայել այն վկայության համար, որը պահպանվել է Մեքստիուս Ռուփուսի գրություն: Համաձայն դրա՝ Տիգրան IV-ի օրոք իրադրությունը Մեծ Հայքում առավել բարվոք էր, քան Պարթևստանում [Sext.Rufus, Brevarium, XIX,2]<sup>85</sup>: Եվ սավածը, կարծում ենք, միանգամայն համահունչ է դրամագիտական տեղեկությին: Հայտնի է, որ մեզ հասած մի պղնձեդրամի վրա Տիգրան IV-ն անգամ վերականգնել է Արտաշիսյանների ավանդական «արքայից արքա» պատվանունը: Պատվանուն, որն անհետացել էր Արտավազդ II-ի ժամանակից ի վեր. ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΓΑΝΗΣ<sup>86</sup>:

Ի դեպ, այդ (և մի շարք այլ) դրամների վրա Տիգրան IV-ը պատկերված է իր քույր Էրատոյի հետ. «Էրատո քույր արքայի Տիգրանի»: Տակիտոսի հավաստմամբ՝ նրանք ամուսնական կապի մեջ էին ըստ օտար սովորույթի (more externo) [Tacit., II, 3]: Հավանաբար, խոսքը խեթուկդաս ամուսնության մասին է, որը կնքվում էր ոչ համամայր եղբարների և քույրերի միջև և զրադաշտական միջավայրում համարվում էր սրբազան<sup>87</sup>: Անտարակույս, սավածը հայոց արքայի պարթևամետության ապացույցն է: Մի կողմնորոշում, որը Մեծ Հայքի համար արդյորևէ վտանգ չէր պարունակում, քանզի ինչպես արդեն նշեցինք, Պարթևստանն ապրում էր տկարության և կրավորականության ժամանակաշրջան:

83 Տիգրան III-ի գահակալման տարիների վերաբերյալ հետազոտողների շրջանում եական տարածայնություններ չկան: Միակ անհարթությունը գալիս է Տակիտոսի վկայությունից: Ըստ նրա՝ արքայի կառավարումը երկարատև չէր (nec Tigrani diuturnum imperium fuit) [Tac.,II,3,5]: Կարծում ենք, պատմագիրն այս հարցում ճշգրիտ չէ, զի մեկ ու կես տասնամյակը կառավարման միջին տևողություն էր համարվում:

84 Տե՛ս **J.Balsdon**, Tiberius, The Emperor (Tiberius Julius Caesar Augustus), The Oxford Classical Dictionary, p. 1071.

85 Սավածը համադրելի է այլ հեղինակների տեղեկությին առ այն, որ հռոմեական ազդեցությունը Մեծ Հայքում լրջորեն սասանվել էր (Vell. Pat., II, 100, 1; Dio Cass., LV,10,18): Յմմտ. **E.Gruen**, op. cit., p. 160.

86 Կարծում ենք, հիմքեր չկան տվյալ դրամը վերագրելու Տիգրան V-ին և նրան էլ կապելու Էրատո քազուհու հետ: **P.Z.Bedoukian**, op. cit., p.77 (n.165): Այդ մասին տե՛ս **M.-L.Chaumont**, op.cit.,p.83.

87 Նման ամուսնությամբ միացած անձինք, ըստ զրադաշտական աստվածաբանության, հանդերձյալ կյանքում ապրում էին հոգեկան վայելքների մեջ: Տե՛ս Arda Viraf Namak, XII, 11-12.

Հրաժարվելով Մեծ Հայքի նկատմամբ ռազմական ձեռնարկից, Օգոստոսի վարչակարգը որոշեց գործել իր փորձված միջոցով: Խոնիր դրվեց թուլացնել երկիրը՝ նրանում բորբոքելով «իշխանական կրքեր»: Եվ հռոմեական սատարմամբ Արտաշիսյան մեկ այլ արքայազն (ոմն Արտավազդ) կարճ ժամանակով, հավանաբար, հասել է հակազահության<sup>88</sup>: Սակայն շուտով մահացել է կամ էլ հեռացվել՝ ոչ առանց հռոմեական շահերի վնասի (non sine clade nostra deiectus) [Tacit., Ann., II, 4]: Այդ դեպքերը հավելյալ չափաբաժնով խթանել են հայոց պարթևամետությունը: Կարծում ենք, հենց այդ մասին է Դիոն Կասսիոսի վկայությունը. «Այդժամ, երբ հայերը փոխեցին իրենց ընթացքը (νεωτερισάντων) և համագործակցեցին (συνεργούντων) պարթևներին, Օգոստոսը կանգնեց դժվար կացության առաջ՝ ինչ անել» [Dio Cass., LV, 10, 18]<sup>89</sup>: Երկար քննարկումներից հետո որոշեց վերադառնալ հիմնախնդրի լուծման ռազմական տարրերակին: Եվ այս անգամ գործը հանձնարարեց թռանը՝ Գայուս Կեսարին, ում էլ պատրաստփուն էր ճանաչել իր անասհման իշխանության ժառանգորդ:

**Երրորդ հարացույց՝** Մեծ Հայքը խնդրարկու պետություն ընդ իշխանությամբ օտար թագավորների: Անտարակույս, Գայուս Կեսարն իր պատանեկան ծայրահեղությամբ այս նոր տարրերակի ջերմ պաշտպանն էր: Օժտված արտակարգ լիազորություններով (imperium maius proconsulare)՝ 1 թվականին նա ժամանեց Արևելք<sup>90</sup>: Նրան սկսեցին այցելել հռոմեական խնդրարկու արքաները, ցեղապետերը և պրովինցիաների կառավարիչները: Մեծ Հայքի կապակցությամբ Գայուս Կեսարը խնդիր ուներ խաղաղեցնել և կարգաբերել այդ երկիրը (componendae Armeniae delectus)՝ ըստ հռոմեական աշխարհաքաղաքական շահերի [Tacit., Ann., II, 4, 1]:

Չզալով ահագնացող վտանգը՝ Տիգրան IV-ը որոշեց չմնալ իրադարձությունների կրավորական դիտորդի վիճակում: Փորձեց միջամտել դրանց ըստ սեփական նախաձեռնության ու ծրագրի: Ուստի՝ նամակով ու նվերներով պատվիրակություն հղեց Օգոստոսին. «Չգտում էր նրանից ստանալ [հայոց] թագավորությունը (τῆν βασιλείαν)» [Dio Cass., LV, 10, 20]<sup>91</sup>: Սակայն միապետը խուսափեց միանշանակ պատասխանից և նրան խորհուրդ տվեց դիմել Գայուսին:

Իսկ վերջինս, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, մտադրվել էր գործել համաձայն Ք.ա. 20 թվականի խաղընթացի: Ուստի՝ նախ և առաջ բանակցություններ սկսեց պարթև Հրահատակ արքայի հետ: Պատանիները հանդիպեցին Եփրատի կղզիներից մեկում՝ ի պատիվ միմյանց կազմակերպելով ճոխ խնջույքներ: Ի վերջո եկան համաձայնության: Ճանաչեցին միմյանց իբրև

88 Յետագոտողների զգալի մասը հակված է մտածելու, թե այս հավակնորդը Տիգրան IV-ից խլել է գահը, բայց այդ մասին ուղղակի տեղեկություն չկա: Բացի այդ՝ նրանք շրջանցում են այն հարցը, թե ի՞նչ ուժերով նա կարող էր հասնել նման հաջողության. տեղական ընդդիմությունը թույլ էր, իսկ «հռոմեական օգնություն չկար»: **N.C. Debevoise**, op. cit., p. 146; **E. Gruen**, op. cit., p. 160; **Յ. Սամանյան**, անդ. էջ 296: Ոմանք էլ նրա իշխանությունը համարում են «երևութական»: Տես **M.-L. Chaumont**, op. cit., p. 76. Կարծում ենք, «հակազահություն» եզրույթն ավելի ընդունելի է:

89 Νεωτερισάντος- ներկա դերբայ νεωτερίζω բայի՝ նշանակությամբ «նորացնել», «թարմացնել», «փոփոխել»: Նաև՝ «հեղաշրջել»: Տես Greek-English Lexicon (compiled by H.G. Liddle and R.Scott), Oxford, 1996, p. 1172. Նախընտրել ենք բայի հիմնական նշանակությունը, որը համահունչ է, մի կողմից՝ նախադասության համատեքստին, մյուս կողմից՝ իրադարձությունների տրամաբանությանը:

90 Տես **F.E. Romer**, Gaius Caesar's Military Diplomacy in the East, Transactions of American Philological Association, 109(1979), pp. 199-214.

91 Համաձայն Դիոն Կասսիոսի նամակ-ուղերձում Տիգրան IV-ն իր վերաբերմամբ չի օգտագործել արքա անունը (τὸ τοῦ βασιλέως ὄνομα...μὴ ἐγγράψας) [Ibid.]: Անտարակույս, փորձել է հարաբերությունները վերադարձնել «զրոյական վիճակի»՝ նոր բարդություններից խուսափելու ակնկալությամբ:

«երկու ամենաազդեցիկ տերությունների և ազգերի առաջնորդներ»: Եվ կրկին Եփրատը հաստատեցին իբրև սահման [Vell.Pat., II,104,2]: Ի լրումն ասվածի՝ հռոմեական կողմը խոստացավ չսատարել պարթև ընդդիմադիր ուժերին<sup>92</sup>:

Ինչ վերաբերում էր Մեծ Հայքին, ապա պարթևներն այս անգամ էլ «խոստացան հեռու մնալ նրանից (ἀποστῆναι)» և ճանաչել իբրև հռոմեական ազդեցության տարածք [Dio Cass., LV, 10a, 4]<sup>93</sup>: Տարօրինակ զուգադիպությամբ հենց այդ նույն ժամանակ Մեծ Հայքը ենթարկվեց բարբարոսների (հավանաբար՝ կովկասյան լեռնականների) հարձակման, և նրանց դեմ պայքարում զոհվեց Տիգրան IV-ը: Գժվար է ասել, արդյո՞ք դա հռոմեական համալիր քաղաքականության հերթական ձեռնարկը չէր: Հստակ է լոկ մի բան. տվյալ կապակցությամբ իշխանական ճգնաժամը հայոց միջավայրում ահագնացավ: Դա էլ հանգեցրեց Էրատո քաղառու հրաժարականին [Dio Cass., LV, 10a,5]:

Ճգնաժամից որոշեցին օգուտ քաղել հռոմեացիները և «ապահովության համար» Մեծ Հայքը Ատրպատականի թագի ներքո դնելու քայլ ձեռնարկեցին<sup>94</sup>: Ենթադրելի է, հռոմեական պաշտոնական քարոզչությունը մեկնարկում էր Արտաշիսյանների հետ մար արքաների ազգակցական կապից: Իսկ Արիոբար-զան արքայի անդրադարձով տարփողում էր, թե նա «պարզապես գերել է հայերին իր մարմնական և հոգևոր բարձր առաքինություններով» [Tacit., Ann., II,4]: Հանրա-ձայնվում էր, թե նրա իշխանությամբ երկրում ի վերջո կհաստատվի խաղաղություն և համաձայնություն: Հարկավ, դա հեռու էր իրականությունից: Կարծում ենք, ճշմարտացի է Դիոն Կասսիոսը: Համաձայն նրա վկայության՝ «Հայերը գնացին [հակահռոմեական] պատերազմի, քանզի հանձնվել էին ինչ-որ Սար Արիոբարզանի (Ἀριοβαρζάνει τινὲ Μήδω [...] παρεδίδοντο) [Dio Cass., LV, 10a, 5; cf. Aug., RG, V, 27]:

Վտանգված էր հայոց ազգային ինքնիշխանությունը, ուստի միավորվել էին տարամետ քաղաքական ուժերը: Եվ պատահական չէ հայոց այն ընդհանրական (և բացասական) գնահատանքը, որն առկա է Օգոստոսի «Կտակում»՝ «խոտոր և ապստամբ ցեղ (gentem desciscitentem et rebellantem)» [Aug., RG, V, 27]: Ենթադրելի է, հենց այդ միասնությամբ էլ Հռոմը խիստ անհանգստացած էր: Ուստի Գայուս Կեսարն իր լեզվոցներով շտապեց Մեծ Հայք: Շրջում էր աշխարհից աշխարհ, գավառից գավառ՝ ավերելով ու թալանելով կարևոր բերդամրոցները: Կարծես շարունակում էր Մ. Անտոնինոսի անփառունակ գործը: Սակայն նրա բախտն ավելի եղբրական եղավ: Երբ շրջափակել էր Արտազիրա (Արտազերք) ամրոցը, դաշունահարվեց բերդապահ Ադդոնից և երկար տառապանքներից հետո կնքեց մահկանացուն [Dio Cass., LV, 10a,6]<sup>95</sup>: Շուտով Մար Արիոբարզանը նույնպես լքեց ասպարեզը՝ «անակնկալ մահվամբ» [Tacit., Ann., II, 4]:

Այս անբնական մահերը, սակայն, չսթափեցրին Օգոստոսին: Նա շարունակեց Մեծ Հայքի նկատմամբ իր որդեգրած քաղաքականությունը: Եվ այս անգամ էլ որոշեց գահը հանձնել Արիոբարզանի որդի Արտավազդին: Տվյալ առիթով անգամ թողարկվեց հռոմեական արծաթե դրամ (դենար), որի դիմերեսին պատկերված է այս նոր արքան՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ (Մեծի Արքայի Արտավազդի) ներգրությունով: Սակայն՝ առանց Արտաշիսյանների ավանդական

92 Տե՛ս **F.E. Romer**, op. cit., pp.203-204.

93 Տե՛ս **N.C.Debevoise**, op. cit., p.149; **K.-H.Ziegler**, op. cit., S. 56.

94 Տե՛ս **M.-L. Chaumont**, op. cit., p. 81.

95 Տե՛ս **G.W.Richmond, T. J.Cadoux**, Caesar, Gaius Julius, The Oxford Classical Dictionary, p. 191.



խույրի, այլ միայն ապարոշով: Այս կերպ թերևս ի բաց էր առնվում նրա առնչությունը հայոց իշխանական ավանդույթի հետ: Փոխարենը դրամի հետերեսին ներկայացված է նրա իշխանության իրական աղբյուրը՝ Օգոստոսի դիմապատկերը բոլորակ ներգրությունով. ΘΕΟΥ ΚΑΙΣΑΡΟΣ ΕΥΕΡΓΕΤΟΥ (Աստծո Կեսարի Բարեգործի): Միանգամայն բնական է, որ նրան նույնպես հայերը չհանդուրժեցին (*haud toleravere*) [Tacit., Ann., II, 4]: Եվ կազմակերպեցին սպանությունը [Aug., RG, V, 27]<sup>96</sup>:

Այլևս ակներև էր, որ Օգոստոսի վարչակազմի «բարեգործությունը» Մեծ Հայքի նկատմամբ ձախողվել է: Միապետը փորձեց փրկել դրությունը և Արտաշատում գահ բարձրացնել ոմն Տիգրանի՝ շեշտելով նրա կապը հայոց արքայատան հետ (*ex regio genere Armenorum oriundus*) [Aug.,RG,V,27; Strabo, XII, 3, 29; Jos.Flav., Ant.Iud., XVIII,140]<sup>97</sup>: Եվ կրկին դրամ թողարկվեց: Դիմերեսին արքան էր՝ ավանդական խույրով և ապարոշով: Բոլորակ ներգրությամբ վկայում էր՝ ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΝΕΟΣ ΤΙΓΡΑΝΗΣ (Մեծ Արքա Տիգրան Կրտսեր): Հետերեսին՝ ΚΑΙΣΑΡ ΘΕΟΣ. ΘΕΟΥ ΥΙΟΣ. ΣΕΒΑΣΤΟΣ (Կեսար Աստված. Որդի Աստծո. Բարեպաշտ): Այլորեն՝ նրա իշխանության հիմքը նույնպես համարվում էր «կայսեր բարի կամքը»: Եվ արդյունքը գուշակելի էր: Այս արքան էլ որևէ հետք չի թողել Հայոց պատմության մեջ. ամենայն հավանականությամբ, արժանացել է մյուս բոլոր դրածոների բախտին. «հանկարծամահ է եղել» կամ էլ աքսորվել:

Մեծ Հայքում ձևավորված այս իրադրությունը հատկանշելիս Տակիտոսն օգտագործում է մի հույժ տարողունակ բանաձև. «[Հայերն]ավելի շուտ անտերունջ էին, քան ազատ (*magis sine domino quam in libertate*)» [Tacit., II,4]: Դժվար չէ նկատել, որ բանաձևը կառուցված է սոփեստներից եկող և Պղատոնի իմաստասիրական համակարգում մանրամասն մշակված մի հղացքի հիմամբ: Հղացք, որը հատկապես տարածված էր Միջին կամ Հռոմեական Ստոիայի ընկերաբանության մեջ: Այն հակառակ համեմատական կապ էր տեսնում իշխանության (*κράτος*) և ազատության (*ἐλευθερία*) միջև: Ընդամին, առաջինը ներկայացնում էր կառավարիչը, երկրորդը՝ ժողովուրդը: Բռնապետության ժամանակ վերասերվում էր ազատությունը, իսկ ամբոխավարության ժամանակ, ընդհակառակը, իշխանությունը: Երկուսն էլ չարիք էին համակեցության համար: Միայն ճշմարիտ արքայի (*ανήρ βασιλικός*) կառավարման ժամանակ (*βασιλεία*) դրանք հավասարակշռվում էին՝ կյանքի կոչելով ընկերային կյանքի կարևորագույն արժեքները՝ բարօրինությունը և բարեկարգությունը (*εὐνομία καὶ εὐταξία*) [Plato, Leg., III, 701a]<sup>98</sup>:

Միով բանիվ, Տակիտոսը հակված էր մտածելու, թե Մեծ Հայքի կապակցությամբ ավելի պատեհ է խոսել ամբոխավարական ազատության (անիշխանության) մասին: Սակայն ասվածի կապակցությամբ միանգամայն այլ պատկեր է ուրվագծում Հ. Փլաբիտը: Համաձայն նրա՝ թեպետ առանց արքայի, հայոց միջավայրում շարունակում էին գործառել ընկերային և իշխանական կարևոր հաստատությունները: Այսպես, երբ Բ.հ. 12 թվականին Պարթևստանից արտաքս-

96 M.-L.Chaumont, op. cit., p. 81.

97 Թ.Մոմմզենի վերականգնմամբ՝ այս Տիգրանը Գերովդես Մեծի թոռն էր, ում մայր Գղափյուրան «մի թույլ հպումով» Արտաշիսյան էր: Տե՛ս T. Mommsen, Res gestae Divi Augusti, Berolini, 1865, S. 80.

98 Միջին Ստոիան մշակել էր այդ տարամետ որակների հնարավոր հավասարակշռությունն արտահայտող մի հղացք *οἰκείωσις*- «համաբերում», «յուրացում» նշանակությամբ: Տե՛ս Ch.Gill, pp.40-44; R.W. Hall, Plato, London, 2004, pp. 81-83.

ված հռոմեական դրածո Վոնոնը փորձեց հաստատվել Մեծ Հայքում. «...նա հնարավորություն չունեցավ [ձեռք գցել] այս մյուս տերությունը: Չի Նպատի շուրջ [հավաքված] հայ մեծամեծերը հարել էին [նրա հակառակորդ] Արտավանին (οἱ περὶ Νιφάτην δυνατοὶ Ἀρμενίων Ἀρταβάνω προστίθενται)» [Jos. Flav., Ant., Iud., XVIII, 2,3]: Կասկածից վեր է՝ խոսքը ավանդական Աշխարհաժողովի մասին է, որն իշխանական ճգնաժամի պայմաններում հայոց միջավայրում մղվել էր առաջին պլան: Ենթադրելի է, հենց նա էլ կազմակերպել էր հայոց դիմադրությունը՝ մերժելով Օգոստոսի դրածոներ Արիոբարզանի, Արտավազդի և Տիգրանի հավակնությունները հայոց գահի նկատմամբ: Եվ Գայոս Կեսարին դաշունահարած Ադրոնն էլ, ամենայն հավանականությամբ, նրա առաջնորդներից էր<sup>99</sup>:

Վոնոնի նկատմամբ Նպատի անվերապահ ժխտողական կեցվածքը, սակայն, չի վկայում նրա նույնքան անվերապահ պարթևամետության մասին: Նույն Հ. Փլաբիոսը վկայում է, որ Արտավան II-ը նկրտումներ ուներ իր որդի Որոդեսին տեսնելու հայոց գահին [Jos. Flav., Ant., Iud., XVIII, 2,4]<sup>100</sup>: Բայց դրանք այդպես էլ իրականություն չեն դարձել: Եվ այդ գործում նույնպես ենթադրելի է Նպատի ներգործուն դերակատարությունը: Այլ խոսքով՝ խնդիրը պետք է դիտարկել հայոց ազգային-քաղաքակրթական ինքնության պահպանման ճիգի շրջանակներում:

Այո, «անտերունչ» վիճակը Մեծ Հայքում բավական տևական է եղել՝ Ք.հ. 6 թվականից շուրջ մեկ տասնամյակ: Բայց այդ ընթացքին հարևան գերտերությունները խուսափում էին կարուկ միջամտել երկրի ներքին գործերին: Հռոմը լուրջ դժվարություններ ուներ Հռենոսի և Դանուբի սահմաններին: Հայտնի է, դրանք հանգեցրին ռազմական աղետի. Ք.հ. 9 թվականին հռոմեական բանակը շրջափակվեց Տևտոբուրգյան անտառում և մինչև վերջին զինվորը կոտորվեց գերման ցեղերի կողմից: Դրանից հետո Օգոստոսի արտաքին քաղաքականությունը փաստորեն կաթվածահար էր եղել<sup>101</sup>: Ինչ վերաբերում է պարթևներին, ապա նրանց գահը մախ՝ զբաղեցնում էր թուլական Վոնոնը: Իսկ նրան արտաքսած Արտավան II-ի դիրքերը տակավին անկայուն էին:

**Ամփոփենք:** Ք.ա. 20 թվականից սկսյալ ավելի քան երեսուն տարիների ընթացքին Մեծ Հայքը քաղաքակրթական տեղատվության դարաշրջանում էր ապրում: Նրանում տիրական էր դարձել ժամանակի կարճ տևողությունը: Եվ համապատասխանաբար՝ առունին նպատակները, միտումներն ու արժեքները: Այլոքեն՝ նա ապրում էր լոկ գոյատևման ալգորիթմով: Սակայն անգամ այդ պայմաններում կառավարող ընտրախավը կարողացավ միավորվել: Նրա տոհմիկ և ռազմավարչական քեների ավանդական հակամարտությունը սկսեց մղվել հետին պլան: Տակիտոսը դրա կարևորագույն խթանը համարում է Արտավազդ II-ի եղերական վախճանը [Tacit., Ann., II, 3]: Այն դարձել էր հայոց ընտրախավի մտահոգևոր սևեռումի առարկան:

99 Ամճանոթ հայոց կյանքի ատանճնահատկություններին հետազոտողներից շատերն այս իրադարձությանը պատեհ մեկնաբանություն չեն առաջարկում: Նրանք Նպատը սոսկ աշխարհագրական վայր են նկատում, բայց ոչ պետական հաստատություն: Ուստի հաճախ չեն էլ հիշատակում: Տե՛ս **N.C. Debevoise**, op. cit., pp. 152-153; **K.-H. Ziegler**, op. cit., S. 58; **E. Gruen**, op. cit., p. 162. Դա էլ հիմք է տվել ենթադրելու, թե անտերունչ դարձած Մեծ Հայքում Վոնոնը գահակալել է 12-16 թվականներին: Նման մոտեցումն առկա է նաև հայ պատմագետների մոտ: Տե՛ս **Յ. Մանանդյան**, անդ, էջ 307: Խնդրի խորքային բովանդակության վրա առաջինն ուշադրություն է հրավիրել Ս.Երեմյանը: Տե՛ս **Ս.Երեմյան**, Մեծ Հայքի պայքարը անկախության համար Արտաշեսյան դինաստիայի անկումից հետո, ԳԺՊ, հ. 1, Եր., 1971, էջ 703-733, էջ 712:

100 Տե՛ս **U. Kahrstedt**, op. cit., S. 16; **M.-L. Chaumont**, op. cit., p. 85.  
 101 Տե՛ս **R. Syme**, Varus, Publius Quinctilius, The Oxford Classical Dictionary, p. 1109.

Սակայն ավելի կարևոր էր ազգային գերիխնդիրը: Ավագանին սկսեց միավորվել՝ փլուզման վտանգը չեզոքացնելու նտահոգությամբ: Եվ գտավ դեղամիջոցը հանձին ինքնութենական այն պաշարի, որը հայոց միջավայրում կուտակվել էր նախորդ երկու հարյուր տարիների ընթացքին: Այդ պաշարի բովանդակային կողմը նշանաբանվում էր իբրև քաղաքակրթական համասեռ ժխտումի ալգորիթմ՝ «ոչ... ոչ»: Ճիշտ այն բանաձևումով, որն առկա է Տակիտոսի գրությունում: Կրկնենք դա մեկ անգամ ևս. «Գտնվելով երկու զորեղ տերությունների միջև՝ հայերը հաճախ գժտվում են նրանց հետ: Հռոմեացիների նկատմամբ [առաջնորդվում են] ատելությամբ, իսկ պարթևների նկատմամբ՝ նախանձով [Tacit., Ann., II, 56,4]:

Նման արդյունքով իր մայրամուտին մոտեցավ Արտաշիսյանների պատմությունը: Այն երևակեց իշխանակենտրոն քաղաքակրթության մի քանի տարակերպեր, որոնք, համոզված ենք, հայոց պատմության հողվություն ունեին արքետիպային իմաստ ու նշանակություն<sup>102</sup>: Կառուցված էին ըստ հոմեոստասիսի երկու հիմնարար տեսակի՝ տարասեռ և համասեռ: Յուրաքանչյուրը՝ իր համապատասխան կառույցներով ու արժեքանությամբ: Եվ ամեն մի նոր գահակալի օրոք դրանք ներկայանում էին առանձնահատուկ համադրությամբ ու բովանդակությամբ:

**Արտաշես I (Ք.ա.189-160թթ.):** Կառուցիկ քաղաքակրթական անհամաչափություն ներհանրության և արտահանրության տիրույթների միջև: Մի կողմից՝ մանրամասն մշակված և իրականացված ներհանրության համասեռ հոմեոստասիս (և...և) միտված համախմբելու հայոց համակեցության բոլոր հանրախմբերը՝ վարչական, տնտեսական, ռազմական, կրոնաքարիզմատիկ, մշակութային խթաններով: Մյուս կողմից՝ արտահանրության տիրույթում հաստատագրված տարասեռ հոմեոստասիս (կամ...կամ). հստակ հակասելիկյան կողմնորոշում՝ հակակշռված նույնքան էլ հստակ հռոմամետությամբ:

**Տիգրան II (Ք.ա.95-55թթ.):** Տերունական հարացույց. ներհանրության տարասեռ հոմեոստասիս՝ բանականացված, աստիճանակարգված և միտված առ կաստայականությունը: Ռազմավարչական ավագանու բացարձակ գերակայություն մյուս հանրախմբերի նկատմամբ: Արտահանրության տիրույթում՝ համասեռ հոմեոստասիս՝ ժխտողության նշանով (ոչ...ոչ) ինչպես Պարթևստանի, այնպես էլ Հռոմի նկատմամբ:

Իրավիճակի կտրուկ փոփոխություն՝ պայմանավորված Տերության փլուզմամբ: Համասեռ հաստատական հոմեոստասիսի ընտրություն (և...և). բարեկամական հարաբերություններ միաժամանակ թե՛ մեկ, թե՛ մյուս գերտերության հետ: Դա էլ ապահովեց Մեծ Հայքի աշխարհաքաղաքական նոր կարգավիճակը՝ տարածաշրջանային տերություն, որի ազդեցության ծիրը տարածվում էր Հյուսիսային Միջագետքից մինչև Կովկասյան լեռներ:

**Արտավազդ II (Ք.ա.55-34 թթ.):** Ներհանրության էնթրոպիայի գորացում՝ տնտեսական, ընկերային, վարչական: Հոմեոստատիկ վիճակի աստիճանական վերասերում: Ներքին հակասությունների սրում՝ հատկապես ավագանու տոհմիկ և ռազմավարչական թևերի միջև: Անհաջող փորձ՝ կրոնամշակութային խթանով վերականգնելու համակեցական միասնությունն ու անդորրը: Արտահանրության

102 Հայոց պատմության ծիրում արքետիպային ալգորիթմների առկայության մասին ավելի մանրամասն տես **Ա.Ստեփանյան**, Ինքնության ազգային չափումը (Նախնական դատողություններ), Ինքնության հարցեր, 1 (2002), էջ 11-31.

տիրություն՝ գերտերությունների միջև համասեռ հաստատական հոմեոստասիսի (և...և) պահպանման ճիգի անհեռանկարայնացում: Ներքադաքական փլուզում: Վտանգված պետական ինքնիշխանություն: Արքայի գերեվարություն և սպանություն՝ ձեռամբ Մ.Անտոնիուսի:

**Արտաշես II (Ք.ա.30-20 թթ.):** Քաղաքակրթական միաչափություն ինչպես ներհանրության, այնպես էլ արտահանրության տիրություններում՝ ըստ տարասեռ հոմեոստասիսի սկզբունքի (կամ...կամ): Ներհանրության տիրություն՝ տոհմիկ ավագանու գերակայություն մնացած հանրախմբերի նկատմամբ, իսկ արտահանրության տիրություն՝ աներկբա պարթևամետություն: Սևուսպիտակային իրավիճակ, որը հղի էր անկայունության վտանգներով: Փլուզում՝ արտաքո ուժերի միջամտությամբ: Արքան՝ հռոմամետ ուժերի դավադրության զոհ:

**Տիգրան III (Ք.ա.20-6 թթ.):** Անսքող դիմակայություն հռոմեական թելադրանքին, որը նպատակ ուներ Մեծ Հայքը իջեցնել խնդրարկու տերության կարգավիճակի՝ նրան պարտադրելով տարասեռ հոմեոստասիս: Սակայն այս անգամ այն պետք է ունենար հակամիշ բովանդակություն. ներհանրության տիրություն՝ ռազմավարչական ավագանու գերակայություն, իսկ արտահանրության տիրություն՝ աներկբա հռոմամետություն (կամ...կամ): Ընդդեմ դրա հայոց պատասխանը. մի կողմից՝ ազգային վտանգված ինքնիշխանության շուրջ ընկերային հանրախմբերի համախմբում, մյուս կողմից՝ արտաքին հավասարակշիռ քաղաքականություն չհռմի և Պարթևստանի միջև: Այլ խոսքով՝ համասեռ հաստատական հոմեոստասիս (և... և) ինչպես ներհանրության, այնպես էլ արտահանրության տիրություն:

**Ընտրախավի ինքնակառավարումը:** Տիգրան III-ի ջանքերով կյանքի կոչված հայոց համակեցության տարակերպը Արտաշիսյանների վերջին շրջանում լուրջ կերպափոխության ենթարկվեց՝ խոնարհված արքայական իշխանություն, ավագանու դերի աննախադեպ բարձրացում: Ինչպես ցուցանում է հետագա պատմությունը, նման իրադրությունը (հարկավ, այլևայլ տարակերպերով) հայոց միջավայրում կրկնության միտում ուներ: Ուստի սխալի չնչին հավանականությամբ կարելի է դրանում նույնպես տեսնել հայոց ինքնության արքետիպերից մեկը:

Ասվածին ցանկանում ենք հավելել հետևյալը: Հռոմեական քաղաքագիտական միտքը, շարունակելով հելլենիստական ավանդույթը, նման համակեցական միջավայրերը բանաձևում էր իբրև էթնարքիա (ἐθνάρχεια): Ընդամին, դրա ծիրում հատկանշվում էր տոհմացեղային կապերի գերակայությունը: Իսկ հասարակական հարաբերությունների կարգավորիչի դերը վերագրվում էր նախնյաց իրավական սովորույթին կամ բնական իրավունքին<sup>103</sup>: Որոշակի մոտավորությամբ այս եզրույթը կարելի է համադրել հայոց մատենագրության մեջ վկայված «տանուտերություն» և դրանից ածանցված՝ «տանուտերն հայոց» եզրույթների հետ: Կարծում ենք, խնդիրը խորքային է և պահանջում է ի մոտո քննություն, որը, սակայն, դուրս է ներկա հետազոտության սահմաններից:

Բավարարվենք միայն կրկնելով, որ հայոց միջավայրում ընտրախավի ինքնակառավարումն արդյունք էր ճգնաժամային իրավիճակների: Եվ Ք.հ. I դարի սկզբին այդ ինքնակառավարումն ուներ հետևյալ բովանդակությունը: Ներհան-

103 Տե՛ս E.Asmis, The State as Partnership.Cicero's Definition of Res Publica in His Work *On the State*, History of Political Thought, 25(2004), pp. 578-579.

րութային տիրություն ներկայանում էր իբրև համասեռ հաստատական հավասարակշռություն՝ կառուցված ըստ հայոց բոլոր հանրախավերի համախմբման նպատակի (և...և):

Այս կապակցությամբ մասնավորեցնելով ասելիքը՝ հարկ ենք համարում հատկանշել, որ տնտեսական փլուզման և քաղաքային կյանքի անկման հետևանքով հենց այս ժամանակ էլ, հավանաբար, սկսել է խաթարվել ավագանու տոհմիկ և ռազմավարչական թևերի միջև առկա (երբեմնի անհաղթահարելի թվացող) անջրպետը: Սկսել է աստիճանաբար կարևորվել նրանց փոխներթափանցման հոլովույթը՝ հարկավ, ըստ տոհմիկների տեսլականի: Իսկ ազգային ինքնիշխանությանն սպառնացող վտանգը, կրկնենք մեկ անգամ էլ, դրան հավելյալ խթաններ է հաղորդել: Եվ սխալ է մտածել, թե այդ մերձեցումն ընթացել է հարթ ու միագիծ: Անտարակույս, եղել են դրամատիկ բախումներ, որոնց մասին սկզբնաղբյուրներում պահպանվել են միայն հատ ու կենտ վկայություններ:

Ընդհանուր առմամբ տրամաբանական այս պատկերի մեջ առկա է մի էական բաց: Այն պատախան չի տալիս մի հույժ կարևոր հարցի. արդյո՞ք նկարագրված կերպավորությունները (և մասնավորաբար՝ արքայական իշխանության խոնարհումը) բացասաբար չեն անդրադարձել հայ շինականության կարգավիճակի վրա և խաթարել նրա համայնական ինքնավար կյանքի ինչ-ինչ երաշխիքներ: Երաշխիքներ, որոնք հաստատագրվել էին տակավին ձեռամբ Արտաշես I արքայի: Հարցի դրական պատասխանը հավանական է թվում: Մակայն այդ մասին չունենք հավաստի փաստեր, ուստի յուրաքանչյուր մասնավորեցում վերջնական համարվել չի կարող:

Ինչ վերաբերում է հայոց ընտրախավի ինքնակառավարման ժամանակաշրջանի արտահանրութային չափույթին, ապա դրա պատկերը բավական հստակ է: Գերակայում էր ժխտողական կեցվածքը ինչպես Հռոմի, այնպես էլ Պարթևստանի նկատմամբ: Այլ խոսքով՝ կառուցված էր ըստ համասեռ ժխտողական հոմեոստասիսի (ոչ...ոչ): Դա էլ հիմք է տալիս հատկանշելու, որ ընտրախավի կառավարումը հիմնված էր հոմեոստասիսի երկու տարակերպերի համադրության վրա՝ ներհանրութային-հաստատական (և ... և) և արտահանրութային-ժխտողական (ոչ ... ոչ):

Ի մի բերելով ասվածը, կարծում ենք, սխալված չենք լինի՝ պնդելով, որ վերը հատկանշված արքետիպային տարբերակները միասին կազմում էին այն «պահոցը», որտեղ կուտակված էր Արտաշեսյանների քաղաքակրթական փորձառությունը: Դրանց տվյալների օգտագործմամբ հայոց ինքնությունը պետք է պատասխաններ մշակեր պատմության մարտահրավերներին:

#### 4. Դարաշրջանի պատմական դրամայի վերջին արարը

Ք.հ.14 թվականին մահկանացուն կնքեց Գայուս Հուլիուս Կեսար Օգոստոսը՝ իր ժառանգորդ Տիբերիուս Կլավդիուսին կտակելով կառավարման մի պահպանողական ծրագիր՝ «պաշտպանել ու ամրապնդել եղածը»<sup>104</sup>: Փոքր Ասիայի և Եփրատի սահմանների անդրադարձով այդ ծրագիրը, մասնավորաբար, պահանջում էր Մեծ Հայքի հիմնախնդրի փոխզիջումային և ճկուն լուծում: Ճկուն՝ ի

104 J.A. Crook, op. cit., p.145.

հակադրություն պարթև Արտավան II-ի ռազմատենչ կեցվածքի ու քարոզչության:

Հռոմեական վարչակազմը սկսեց մշակել հիմնախնդրի մանրամասները: Ենթադրելի է, որ այդ գործում Տիրեքիոսի հանձնարարականները հույժ տեղին էին ու էական: Չի քաջատեղյակ էր իրավիճակին: Եվ ինչպես կարելի է եզրակացնել հետագա պատմական անցքերի տրամաբանությունից, հաշվի էր առնվել հայ-հռոմեական առնչությունների ողջ նախընթաց փորձը: Հնարավորինս զանց էին առնվել քարոզչական չափազանցությունները և հիմնախնդրին մոտեցել սթափ չափանիշերով:

Նույն սթափ մոտեցմամբ էլ ընտրվել էր ծրագիրն իրագործող գլխավոր անձը՝ զորավար Հուլիոս Կեսար Գերմանիկոսը: Կայսերական ընտանիքի այս երիտասարդ ներկայացուցիչն արժանի հեղինակություն էր վայելում ողջ Տերությունում: 12-16 թվականներին տպավորիչ հաղթանակներ էր տոնել զերման ցեղերի նկատմամբ՝ Հռենոսի սահմանների երկայնքով վերականգնելով Հռոմի խաթարված հեղինակությունը<sup>105</sup>: Տիրեքիոսի անմիջական նախաձեռնությամբ նա օժտվեց արտակարգ լիազորություններով (հավանաբար՝ imperium proconsulare maius) և 18 թվականին ուղարկվեց Արևելք: Թեպետ իրեն էին ենթարկվում տեղի բոլոր հռոմեական և դաշնակցային ուժերը, սակայն պատրաստվում էր խնդիրները լուծել բացառապես դիվանագիտական միջոցներով: Ի հաստատումն ասվածի՝ հետազոտողները հաճախ ցուցանում են Գերմանիկոսին հղված կայսեր նամակը, որտեղ պահանջվում էր գործել ավելի խելամտությամբ, քան ուժով (plura concilio quam vi) [Tacit., Ann., II, 26]<sup>106</sup>:

Գերմանիկոսը քայլեր ձեռնարկեց արևելյան սահմանների երկայնքով հռոմեական գերակայությունը կազմակերպելու ըստ նոր ձևաչափի: Նա իրատես էր, քանզի մեկնարկում էր այն իրողությունից, որ տարածաշրջանում Հռոմը կորցրել է իր կարևոր հենակետը՝ Ատրպատականը: Նաև՝ Ադիաբենեն: Դրանք այժմ ներգրավվել էին պարթևական համադաշնության ծիրում՝ հրաժարվելով իրենց անիրատեսական նկրտումներից: Ուստի անհրաժեշտություն էր գոյացել ինչ-որ ձևով համակշռել կորուստը: Նպատակին հետամուտ՝ զորավարն առաջադրանք ուներ կրկին ակտիվացնել «հայկական խաղաքարը»: Հստակեցվել էր նաև դրա իրագործման ճանապարհը: Այն է՝ Մեծ Հայքում հաստատել իշխանական մի այնպիսի կառույց, որը կարողանար համաբերել ինչպես այդ երկրի, այնպես էլ Հռոմի շահերը: Համաձայն պաշտոնական քարոզչության՝ ինչպես այլուր, այնպես էլ այստեղ Գերմանիկոսը պետք է «բարենպաստ ընթացքով համաբերեր բոլոր կարգի բարեկամական առնչությունները» [Tacit., Ann., II, 57,1]<sup>107</sup>:

Ենթադրվում էր, որ նման համաբերման բևեռը պետք է դառնար հայոց նոր արքան, ում պետք է անվերապահորեն վստահելին հակամարտող թե՛ մեկ, թե՛ մյուս կողմը: Այդ տրամաբանությամբ կատարվեց առաջին հայացքից անսպասելի քայլ. առաջ քաշվեց հայոց գահի «մի անհայտ թեկնածու»՝ հարևան Պոնտական թագավորության հանգուցյալ արքա Պոլեմոնի որդի Չենոնը:

*Այս առումով, կարծում ենք, պատեհ է հետևյալ տեղեկանքը: Պոլեմոնը Փոքր Ասիայի Լաոդիկեա քաղաքից էր՝ հարուստ և ազդեցիկ ճարտասան Չենոնի*

105 Տե՛ս **A.Momigliano, T.J.Cadoux**, Germanicus Julius Caesar, The Oxford Classical Dictionary, p.465.

106 Տե՛ս **E.Koestermann**, Die Mission des Germanicus im Orient, Historia, 7(1958), S. 339-340.

107 **E.Koestermann**, op. cit., S. 338.

որդին: Զ.ա. 40-39 թվականներին կազմակերպել էր հարազատ քաղաքի պաշտպանությունն ընդդեմ պարթևաց: Հայրն շահել էր Անտոնինոսի համակրանքը և, հավանական է, սրացել հռոմեական քաղաքացիություն: Ավելին, եռսպեյրը նրան արժանացրել էր արքայական պատվի՝ ի կառավարումն հանձնելով Պոնտոսը և Փոքր Հայքը: Զ.ա.36 թվականին մասնակցել է Անտոնինոսի պարթևական ռազմարշավին, գերի ընկել և ապա փրկագնվել: Ակտիոնի ճակատամարտից հետո Օկտավիանոսը «ներել է նրան», վերականգնել արքայական պատվիլը, սակայն միայն Պոնտոսի նկատմամբ: Զ.ա.15 թվականին հռոմեացիները նրա փրկույթներն ընդարձակել են ի հաշիվ Բոսփորի թագավորության: Սպանվել է Զ.ա.8 թվականին՝ շեռամբ ապստամբ բոսփորցիների<sup>108</sup>: Պոնտոսում գահն անցել է նրա այրուն՝ Պյութոդորիսին:

Չենոնի հավակնությունները հայոց գահի նկատմամբ հիմնավորելու նպատակով Տակիտոսը հատկանշում էր հետևյալ փաստը. «Վաղ մանկությունից (prima ab infantia) նա քինախնդիր էր հայոց [ընկերային] կարգերին և կրթանքին (institute et cultum Armenorum aemulatus)» [Tacit., Ann., II, 56, 2]: Տարօրինակ է, ինչու՞ հոր մահից հետո նա չի մնացել այրի մոր կողքին, յուրացրել պոնտական «կարգերն ու կրթանքը»՝ նախապատրաստվելով ապագա գահակալության: Ի՞նչ հիմամբ է (հավանաբար, Տիգրան III-ի նախաձեռնությամբ) բերվել Արտաշատ: Հարցեր են, որոնք չունեն միանշանակ ու հստակ պատասխան: Կարծում ենք, առավել տրամաբանական է ենթադրել, թե մանուկ արքայազնը մայրական կողմից սերում էր Արտաշիսյաններից: Իսկ Պյութոդորիսը նրա հարազատ մայրը չէր<sup>109</sup>:

Այո, հայոց «անտերնչության» ընթացքին Չենոնի իշխանական հավակնությունների մասին ոչինչ հայտնի չէ: Սակայն նա հետևողական ու անշտապ նախապատրաստվում էր դրան: Այդ առումով կրկին ճշգրիտ է Տակիտոսը, ում վկայությամբ՝ պոնտական արքայազնն անցել էր հայոց իշխանական նվիրագործության որոշակի շրջափուլերով՝ «որսով, խնջույքներով (uenatu, epulis) և բարբարոսների մոտ հարգի այլ բաներով» [Ibid.]<sup>110</sup>: Արդեն առիթ ենք ունեցել ցուցանելու, որ հընթացս դրանց հայոց ապագա գահակալը նախ և առաջ անդամակցում էր ռազմիկների հանրախմբին: Եվ պատրաստվում էր դառնալ վերջինիս առաջնորդը՝ ընդ հովանավորությամբ Վահագն աստծո: Ավարտական շրջափուլն արարողակարգվում էր Նպատի աշխարհաժողովում՝ ավագանու և զինվորների ներկայությամբ: Աստ հանրախմբի մասնակցությամբ նա իրավունք էր ստանում կոչվելու «հայ» և ընդունելու իր արքայական խույրը<sup>111</sup>: Այլ խոսքով՝ դառնում էր իր երկրի «ոգեղեն օրենքը»:

Ասվածի դիտանկյունից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հռոմեացի պատմագրի մյուս վկայությունը: Համաձայն դրա՝ նախքան Գերմա-

108 Տե՛ս **G.W.Bowersock**, op. cit., pp. 51-53.

109 Պյութոդորիսը Մ.Անտոնինոսի թոռնուհին էր: Տե՛ս **R.Hanslik**, Pythodoros, Realencyclopaedie der klassischen Altertumswissenschaft, Suppl. 14, München, 1964, S. 582-584: Եթե այս վերականգնումը ճիշտ է, ապա Չենոնը եռսպեյտի ծոռն էր: Սակայն դա հիմք չէր կարող ծառայել նրա նկատմամբ հայոց արքունիքում բարեհաճ վերաբերմունքի համար: Դայոց միջավայրում եռսպեյտի նկատմամբ առկա էր խոր ատելություն:

110 Չպետք է մոռանալ, որ Տիբերիոսն ինքն էլ իշխանության էր եկել որդեգրման (adoptio) ճանապարհով: **J.Balsdon**, op. cit., p. 1071.

111 Տե՛ս **A.Stépanian**, Le taité de Randée et le couronnement de Tiridate l' Arsacide à Rome, Revue des Études Arméniennes, 9(1975), pp. 213-215.



նիկուսի Մեծ Հայք ժամանելը, Ջենոնն «արդեն հասցրել էր առինքնել [հայոց] ավագանուն և հասարակ ժողովրդին (proceres plebumque iuxta devinxerat)» [Ibid.]: Մխալի չնչին հավանականությամբ կարելի է պնդել, որ այդ «առինքնումը» հաստատութենացվել էր: Ուստի՝ խոսքը կրկին Նպատի մասին է: Իսկ դա նշանակում է, որ պետք է հրաժարվենք մեր նախադրույթից և հաստատագրենք, որ Ջենոնը հայոց գահի «մի անհայտ թեկնածու» չէր: Նրա իշխանական հավակնություններն արդեն օրինականացվել էին: Եվ այս գործընթացն ուղղորդվել էր հայոց ավագանու կողմից:

Անտարակույս, պարթև Արտավան II-ը և իր շրջապատը ոգևորված չէին դեպքերի մեծ զարգացմամբ: Դրան հակառակ, հռոմեական կողմը որոշել էր ճանաչել հայոց նոր գահակալին և բարելավել խաթարված հայ-հռոմեական հարաբերությունները: Հենց դա էլ պետք է համարել Գերմանիկուսի առաքելության հիմնական նպատակը: Գործելով ասվածին համընթաց՝ զորավարը 18 թվականին ժամանեց Մեծ Հայք: Եվ հավանաբար, մտերիմների մի նեղ շրջապատով էլ մտավ մայրաքաղաք. «Արդ, Գերմանիկուսն Արտաշատ քաղաքում ավագանու հաճությամբ (adprobantibus nobilibus), հոծ բազմությամբ շրջապատված (circumfusa multitudine), արքայական թագ դրեց նրա [Ջենոնի] գլխին (insigne regium capiti eius imposuit)» [Tacit., Ann., 56, 3]:

Հայսմ կարևորվում էր պատմական մի գուգահեռ: Ավելի քան ութսուն տարի առաջ (Ք.ա.66 թ.) հարաբերությունները կարգավորելու նպատակով Տիգրան II-ը ներկայացել էր հռոմեական բանակի (= Հռոմ) ժողովին: Այժմ կատարվել էր հակառակը. արտակարգ լիազորություններով օժտված հռոմեական զորավարն ինքն էր ներկայացել հայոց մայրաքաղաքի ժողովին (ազորա): Եվ դրամագիտական նյութը հավելյալ լույս է սփռում այդ տեսարանին: Պահպանվել են արծաթե դեմարներ՝ թողարկված, հավանաբար, Կեսարիայում: Դրանց դիմերեսին Գերմանիկուսի դիմապատկերն է՝ շրջանաձև լատիներեն ներգրությամբ. GERMANICUS CAESAR. TI. AUG. F. COS. II (Գերմանիկուս Կեսար. Տիբերիոս Օգոստոսի Որդի. Կոնսուլ կրկնակի): Հետերեսին՝ տղամարդու երկու կանգնած պատկեր: Մեկի հասակի երկայնքով ներգրված է ARTAXIAS, իսկ մյուսի՝ GERMANICUS<sup>112</sup>: Ինչպես և սպասելի էր, բացակայում են Օգոստոսի օրոք նախընտրելի «Հայքը գրավյալ» կամ «Հայքը վերագրավյալ» ներգրությունները: Էլ չենք խոսում «խոնարհ ու բազկատարած հայի» մասին:

Հետաքրքիր է մահ դիտարկվող դրամների «խաղարկային բովանդակությունը»: Գերմանիկուսը ձախ ձեռքով բռնել է իր նիզակը, իսկ աջով ցուցանում է Արտաշեսի ապարոշը, որի մի ծայրը, թվում է, կախված է նրա ձեռքից: Ինչ վերաբերում է հայոց նորընծա արքային, ապա նա նույնպես ցուցանում է իր ապարոշը: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ Տակիտուսի հիշատակած insigne regium-ի տակ պետք է հասկանալ հայոց թագի հենց այդ տարատեսակը<sup>113</sup>: Արդեն քանիցս հատկանշել ենք, վերջինս իրավում էր Արտաշիսյաններին այլ երկրների հետ հարաբերություններում ներկայանալ իբրև ինքնիշխան գահակալներ: Ինչպես և Տիգրան II-ի պարագային, այժմ էլ ապարոշով պատվելով հայոց արքային՝ հռոմեական կողմն առաջին հերթին ճանաչում էր նրա իշխանությունը<sup>114</sup>:

112 Տե՛ս P.Z.Bedoukian, op. cit., p.77 (n.168).

113 Տե՛ս E.Koestermann, op.cit., S. 342.

114 Որոշ հետազոտողներ հակադարձ համեմատական կապ են տեսնում Արևելքի երկրների «հելլենացվածության աստիճանի» և նրանց ինքնիշխանության միջև: Մեծ Հայքը ներկայացվում է իբրև ասվածի

Գրան պետք է հետևեին միջպետական տարասեռ հարաբերությունները՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն:

Այլ խոսքով՝ Մեծ Հայքի հարցում Տիրերիուսը որոշել էր սրբագրել Օգոստոսի որդեգրած հրամայականի քաղաքականությունը<sup>115</sup>: Ավելի հստակեցնելով ասվածը՝ կարելի է պնդել, թե նա հետհայում էր դեպի Գն. Պոմպեոսի փորձը: Սակայն ինչպես այնժամ, այնպես էլ այժմ հռոմեական քաղաքականության մեջ չկար ոչինչ անշրջելի: Եվ Տիրերիուսի վարչակարգը մտադիր էր սուկ ժամանակավոր դադար շահել՝ իր ծավալապաշտական նկրտումներին վերադառնալու համար: Հետագա պատմությունը լիովին հաստատում է այս միտքը:

Մի նկատառում ևս: Վերը քննության առած դրամներում Չենոնն արդեն ներկայանում է իբրև Արտաշես: Այդ կերպավորությունը նույնպես չի վրիպել Տակիտոսի հայացքից. «Ոմանք էլ հարգ ընծայելով (uenerantes) սկսեցին նրան ողջունել իբրև արքա Արտաշես (regem Artaxiam consalutauere)» [Tacit., Ann., II, 56, 3]: Եվ կարծում է, թե նոր անունն արքան ստացել է Արտաշատ մայրաքաղաքից (ex nomine urbis): Հարկավ, դա հեռու է իրականությունից: Առավել հավանական է մտածել, որ տվյալ պարագային խոսքը նորից արքայական գաղտնածեսի մասին է: Արդեն հատկանշել ենք, տակավին Արտաշես I-ը Մեծ Հայքում սահմանել էր արքայատան (նախնիների) պաշտամունքը<sup>116</sup>: Եվ հույժ հավանական է, որ յուրաքանչյուր նոր գահակալ, անցնելով համապատասխան նվիրագործությունների միջով, իրավունք էր ստանում իր անունը գուգահեռել Արտաշես անվամբ: Արդ Չենոնի հերթն էր:

*Ասվածը զուգահեռվում է պարթև Արշակունիների օրինակով: Հայրնի է, նրանց բոլոր գահակալները, բացի սեփական անունից, կրում էին նաև տոհմիկ Արշակ անունը: Կասկածից վեր է, այս պարագային նույնպես գործ ունենք արքայական գաղտնածեսի հետ: Եվ ինչպես հայոց միջավայրում, այնպես էլ այսպեղ դրա մասին տեղեկույթը հույժ սահմանափակ է: Ի հետևանս դրա՝ արդի հետազոտություններում հիմնախնդիրը պարզապես չրջանցվում է: Մինչդեռ այն ի գորտու է զգալի չափով ընդլայնել մեր պատկերացումները պարթևաց իշխանական կառույցի և պատմության վերաբերյալ<sup>117</sup>:*

Այո, Գերմանիկուսը հայոց միջավայրում շեշտադրում էր Արտաշատի ժողովի կարևորությունը՝ պատրաստ (նորից Գն. Պոմպեոսի օրինակով) առանձնահատուկ հարաբերություններ զարգացնելու վերջինիս հետ: Նախկինում դա կարող էր լուրջ ներքաղաքական խտտորումների տեղիք տալ: Բայց՝ ոչ այժմ: Հայոց ընտրախավի երկու թևերը պահպանում էին միասնությունը: Գերակայում էր թերևս այն մտայնությունը, թե վերականգնվում է Արտաշեսյանների երբեմնի փառքը: Ի մասնավորի, դրանով պետք է բացատրել այն փաստը, որ Չենոն-Արտաշեսի գահակալության տարիները (18-34 թթ.) հայոց համար եղել են բացառիկ խաղաղ ու անամպ:

Գերմանիկուսի հետագա ձեռնարկումները հիմք են տալիս մեկ այլ առումով

---

կարևոր դրսևորումներից մեկը: Տե՛ս **G.W.Bowersock**, op.cit., p. 58.

115 Տե՛ս **E. Koestermann**, op. cit., S. 343.

116 Տե՛ս **Ա.Ստեփանյան**, Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրը Մեծ Հայքում:

Մաս I. Ներհանրութային հոմեոստասիսի հաստատումը. Արտաշես I, Վե՛մ, 3 (28), 2009, էջ 51-52:

117 Տե՛ս **J.Wolski**, op.cit., p. 61.

ևս զուգահեռելու նրա քաղաքականությունը Գ-ն. Պոմպեյուսի քաղաքականության հետ: Խոսքը Մեծ Հայքի տարածաշրջանային կարգավիճակի մասին է: Ասվածը հստակ ուրվագիծ է ստանում, երբ հետևում ենք հարակից երկրների նկատմամբ զորավարի որդեգրած մոտեցումներին:

Նախ և առաջ, Գերմանիկուսը կարգավորեց հարաբերությունները Պարթևստանի հետ: Նույն 18 թվականին Եփրատի սահմանին հանդիպում ունեցավ Արտավան արքայի հետ: Եվ կողմերը եկան հետևյալ փոխզիջումային համաձայնության: Չնայած ուղղակի տեղեկության բացակայության, սխալված չենք լինի՝ պնդելով, որ հռոմեական կողմը նախ և առաջ հրաժարվում էր Ադիաբենեի և Ատրպատականի նկատմամբ իր նախկին նկրտումներից<sup>118</sup>: Եվ ապա (այս մասին արդեն վկայում են սկզբնաղբյուրները) հրաժարվում էր սատարել պարթևական ընդդիմադիր ուժերին: Եվ ի հաստատումն դրա՝ փախստական Վոնոնին (ով շարունակում էր կապերն իր աջակիցների հետ) հեռացնում էր Ատրիքից [Tacit., II, 58]: Եփրատը կրկին ճանաչվում էր երկու գերտերությունների սահման [Strabo, I, 28]: Իր հերթին պարթևաց կողմը երաշխալքներ էր տալիս, որ չի միջամտի Մեծ Հայքի ներքին գործերին: Տրամաբանական է հավելել՝ նաև Վիրքի ու Աղվանքի<sup>119</sup>:

Այլ խոսքով՝ Հյուսիսային Միջագետքից մինչև Կովկասյան լեռներն ընկած տարածաշրջանը կրկին առանձնացվում էր ընդ երաշխավորությամբ Հռոմի: Եվ ինչպես Պոմպեյուսի ժամանակ, այժմ էլ այն ճանաչվում էր իբրև ամիկալ (բարեկամական) հարաբերությունների միջավայր, որտեղ Հռոմը պատրաստվում էր պաշտպանել իր շահերն առավելաբար իրավաքաղաքական և դիվանագիտական միջոցներով: Ուստի Գերմանիկուսը պատեհ համարեց տարածաշրջանը սահմանագծել նաև արևմուտքից:

Այս մասին վկայում են Փոքր Ասիայի արևելքում զորավարի ձեռնարկած վարչական միջոցառումները: Ի մասնավորի, խոսքը վերաբերում է Կապադովկիային և Կոմագենեին: Մահացել էին այդ խնդրարկու թագավորությունների ծեր գահակալները՝ Արքելայոսը և Անտիոքոս III-ը, ովքեր երկար տարիներ հավատարմությամբ ծառայել էին Հռոմին: Սակայն Հռոմի համար գերակա էր միայն սեփական շահը: Ուստի առանց վարանման Գերմանիկուսը դրանք վերածեց պրովինցիաների [Tacit., Ann., II, 42; 56]<sup>120</sup>: Նույն ճակատագիրը սպասում էր նաև Պոնտոսին: Ճիշտ է, իրենց կարգավիճակով վերջիններս երկրորդական կարգավիճակ ունեին և կառավարվում էին պրոկուրատորների ձեռամբ, սակայն կայսերական վարչակարգի վերահսկողությունը նրանց նկատմամբ անմիջական էր ու ճկուն: Մի բան, որ լիովին պատշաճում էր նրանց վերագրվող դերակատարությանը՝ լինել Հռոմեական խաղաղության «կայուն և կառավարվող» սահմանը:

Այսու իր ավարտին հանգեց Ք.ա. I-Ք.հ. I դարերի սահմանագծին Մեծ Հայքի շուրջ ծավալված պատմական դրաման: Կրկնենք մեկ անգամ էլ. դրա վերջին արարն արդյունավորվեց աշխարհաքաղաքական մի համալիրով, որն ընդհանուր գծերով հիշեցնում էր Գ-ն. Պոմպեյուսի ձևավորած համալիրը: Սակայն միայն ընդհանուր գծերով, զի պատմությունը նույնությամբ երբեք չի կրկնվում: Այլ էր

118 Տե՛ս **U.Kahrstedt**, op. cit., S. 18-19; **K-HZiegler**, op. cit., S. 59; **E.Koestermann**, op. cit., S. 361-363.  
119 Տե՛ս **M.-L. Chaumont**, op. cit., p. 85.  
120 Տե՛ս **D.Magie**, Roman Rule in Asia Minor. To the End of the Third Century After Christ, v.1, Princeton (N.J.), 1950, pp.498-499; **B.M.Levick**, The East. Greece and Asia Minor from 43 B.C. to A.D.69, CAH, v.10, p. 670.

պատմական իրադրությունը, այլ էին շարժառիթներն ու գործող դեմքերը: Սակայն երկու գերտերությունների միջև ամիկալ տարածաշրջան ստեղծելու անհրաժեշտությունը վեր էր պատմական կոնկրետությունից և եզակիությունից: Այն դեռ բազմիցս երևալու էր պատմության հեռանկարում (a monte Caucaso usque ad flumen Euphratem)՝ ամեն անգամ քաղաքակրթական նոր հանդերձանքով<sup>121</sup>: Այլ խոսքով՝ սխալված չենք լինի, եթե դրան նույնպես վերագրենք պատմական արքետիպի իմաստ ու բովանդակություն:

## Summary

### **THE PROBLEM OF CIVILIZATION HOMEOSTASIS IN GREAT ARMENIA**

Great Armenia and the Civilization Frontier of Euphrates  
(At the turn of I B. C. - A. D. I centuries)

Albert A. Stepanyan

The paper deals with the problems of Great Armenia during the mentioned period. Some important aspects of the geopolitical status of the kingdom are taken into consideration. It resulted from the Roman, Parthian and Armenian scenarios interwoven under concrete situations. Four paradigms of the status are the main focus of the paper: Great Armenia as a Roman province, a client kingdom under Roman nominees, independence under Artaxiads and independence secured by the national aristocracy. The last two paradigms consolidated Armenian society and looked at the settlement of the problem through compromise.

This compromise, in a sense, is reminiscent of the settlement of the Treaty of Artashat arranged by Gn. Pompeius and Tigran II (66 B.C.). In 18 A.D., one of the most influential members of the imperial house, Germanicus, arrived in Armenia. In Artashat, he called an assembly (agora) and managed the accession of Zenon to the throne of Artaxiads. This Pontian prince (probably, an Artaxiad by his mother) was brought up in Armenia, and had gained the favour both of the aristocracy and the people. As a result of this settlement, Artashat was again recognized as the political center of the region from North Mesopotamia to the Caucasian Mountains.

---

121 Տե՛ս **Ա.Ստեփանյան**, Մեծ Հայքը անտիկ համաշխարհայնացման գործընթացների ծիրում. Քաղաքակրթական հետհայաց, Պատմության հարցեր, 1 (2009), էջ 31-38.